

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2019 թվականի
նոյեմբերի 28-ի N 1716 - Լ որոշման

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	3
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	1
2. ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	2
3. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	2
4. ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ	4
5. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԹԻՐԱԽՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ	4
6. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ, ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	5
Բաղադրիչ 1. Մակրոտնտեսական և բյուջետային ցուցանիշների կանխատեսում	5
Բաղադրիչ 2. Հարկաբյուջետային ռիսկերի հաշվետվողականություն	7
7. ՊԵՏԱԿԱՆ ԵՎԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	9
Բաղադրիչ 3. Եկամուտների քաղաքականություն	9
Բաղադրիչ 4. Եկամուտների վարչարարության թափանցիկություն և համապատասխանություն	12
8. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ, ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱԶՄՈՒՄ	15
Բաղադրիչ 5. Ծրագրային բյուջետավորում և ռազմավարական պլանավորում	15
Բաղադրիչ 6. ՄԺԾԾ գործընթաց, բյուջետային կարգապահություն և թափանցիկություն	18
Բաղադրիչ 7. Բյուջետային ծրագրերի ծախսերը կազմելու հաշվարկման գործընթացի ավտոմատացում	21
9. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ, ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	22
Բաղադրիչ 8. Բյուջեների կատարման հաշվետվություններ	22
Բաղադրիչ 9. Ծախսերի ապառքների մշտադիտարկում և կառավարում	23
Բաղադրիչ 10. Աշխատավարձի ֆոնդի հսկողություններ	25
10. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ	28
Բաղադրիչ 11. Պետական պարտքի կառավարում	28
11. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱԴՐՈՒՄ	29
Բաղադրիչ 12. Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման արդյունավետությունը	29
12. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱԴՐՈՒՄ ԵՎ ԱՌԻԴԻՏ	32
Բաղադրիչ 13. Կորպորատիվ հաշվապահական հաշվառման և աուդիտի գործունեության կարգավորում	32
13. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՊՈԱԿ)	34
Բաղադրիչ 14. Պետական կազմակերպությունների ֆինանսական կառավարում և հսկողություն՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունների (ՊՈԱԿ) հաշվետվողականությունը	34
14. ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐ	35
Բաղադրիչ 15. Էլեկտրոնային գնումների համակարգի արդիականացում	35
Բաղադրիչ 16. Գնումների պլանավորում	36
Բաղադրիչ 17. Գնումների բողոքարկման համակարգ	37
15. ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ	38
Բաղադրիչ 18. Ֆինանսական կառավարում և հսկողություն (ՖԿՀ)	38
Բաղադրիչ 19. Հանրային հատվածի ներքին աուդիտ	39
Բաղադրիչ 20. Կենտրոնացված ներդաշնակեցման միավոր (ԿՆՄ)	42
Բաղադրիչ 21. Ֆինանսաբյուջետային վերահսկողություն (ՖԲՎ)	43
16. ՀԱՆՐԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	45
Բաղադրիչ 22. Հանրային ակտիվների կառավարում	45
Բաղադրիչ 23. Հանրային ներդրումների կառավարում (ՀՆԿ)	47
17. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐԱՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	51

Բաղադրիչ 24. Տեղական ինքնակառավարման մարմիններում ֆինանսական կառավարման արդյունավետությունը	51
18. ԱՐՏԱՔԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԻԴԻՏ	53
Բաղադրիչ 25. Ազգային ժողովի կողմից ֆինանսավարկային և բյուջետային ոլորտի վերահսկողություն	54
Բաղադրիչ 26. Հաշվեքննիչ պալատի անկախությունը և կառավարության տարեկան ֆինանսական հաշվետվությունների արտաքին աուդիտը	58
19. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (ԿՖԿՏՀ)	61
Բաղադրիչ 27. Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) ձևավորում	61
20. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ	63
21. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ	63
22. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ	65

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ARMEPS	Հայաստանի էլեկտրոնային գնումների համակարգ
ԱԺ	ՀՀ Ազգային ժողով
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԲՏԱՆ	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ԳՄՀԸ/GIZ	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԵՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԷՆ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
ԶԳ	Զարգացման գործընկերներ
ԾԲ	Ծրագրային բյուջետավորում
ԿՑ	Կատարողական ցուցանիշ
ԿՖԿՏՀ/GFMIS	Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգ
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՊ	ՀՀ հաշվեքննիչ պալատ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀՀՀՀ	Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՆԿ	Հանրային ներդրումների կառավարում
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՇՄՆ	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
ՊԾՖՀ-PEFA	Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականություն
ՊԵԿ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ՊՄ	Պետական իշխանության մարմին/ներ
ՊՆՖՀ	Պետական ներքին ֆինանսական հսկողություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՊՖԿ	Պետական ֆինանսների կառավարում
ՊՖԿՀ	Պետական ֆինանսների կառավարման համակարգ
ՊՖԿՀԲ	Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումներ
ՍԻԳՄԱ/SIGMA	Աջակցություն պետական կառավարման և ղեկավարման բարեփոխումներին
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՏԱ	Տեխնիկական աջակցություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿԵՆ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիա
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՖՆ	Ֆինանսների նախարարություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանում պատմականորեն ՊՖԿՎ գնահատման և բարեփոխումների իրականացման համար ուղենիշ են հանդիսացել «Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության (ՊԾՖՀ-PEFA) գնահատումները»: Առաջին անգամ այն իրականացվել է ՀԲ աջակցությամբ 2008 թվականին: Համանման գնահատում, ավելի նեղ շրջանակով՝ պետական ծախսերի կառավարման մասով, ՀՀ-ում ՀԲ-ի աջակցությամբ իրականացվել է դեռևս 2002 թվականին, որի արդյունքները օգտագործվել են բյուջետավորման գործընթացի բարեփոխման ուղղությամբ իրականացված աշխատանքների ժամանակ: Արդյունքում ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի նիստի N 42 արձանագրային որոշմամբ հաստատվել է ՊՖԿՎ բարեփոխումների առաջին ռազմավարությունը և բարեփոխումների շրջանակում 2010-2014 թվականներին իրականացվելիք միջոցառումների ծրագիրը:

2. ՊԾՖՀ երկրորդ գնահատումը իրականացվել է 2013 թվականին, որը միտված էր ներկայացնելու առաջին գնահատումից ի վեր ՀՀ-ում ՊՖԿ համակարգում տեղի ունեցած զարգացումները և փոփոխությունները: Ինչպես վկայում է ՊԾՖՀ գնահատման 2013 թվականի հաշվետվությունը, ՊՖԿ համակարգում իրականացվող շարունակական բարեփոխումները նպաստել են ՊՖԿ համակարգի արդյունավետության բարելավմանը¹: 2013 թվականին իրականացված ՊԾՖՀ գնահատման և հաշվետվությունների կազմման աշխատանքներին մեթոդական ու տեխնիկական աջակցություն են տրամադրել մի շարք միջազգային կազմակերպություններ՝ Եվրոպական Միությունը, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (ԳՄՀԸ) և ՀԲ-ն, ինչը հնարավորություն է ստեղծել ապահովելու առավել ճշգրիտ և օբյեկտիվ ՊԾՖՀ գնահատում: Այդ է վկայում նաև ՊԾՖՀ գնահատման հաշվետվության վերաբերյալ ՊԾՖՀ քարտուղարության կողմից տրամադրված ՊԾՖՀ որակի երաշխավորման (PEFA CHECK) գնահատումը:

3. 2014 թվականին Եվրոպական Միության կողմից տրամադրված տեխնիկական աջակցության շրջանակում գնահատվել են ՊՖԿՎ բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված 2011-2014թթ. իրականացված միջոցառումները և, հիմք ընդունելով գնահատման արդյունքները, ինչպես նաև Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության (ՊԾՖՀ) 2016 թվականի փետրվարին ՊԾՖՀ քարտուղարության կողմից ընդունված ՊԾՖՀ-2016 նոր շրջանակը, մշակվել և ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 6 արձանագրության 15-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշմամբ ընդունվել է ՊՖԿՎ բարեփոխումների վերանայված՝ 2016-2020թթ. ռազմավարությունը (ՊՖԿՎԲ երկրորդ ռազմավարությունը):

4. Սույն՝ երրորդ ռազմավարությամբ սահմանվում են ՊՖԿՎ 2019-2023թթ. բարեփոխումների տեսլականը, նպատակները, դրանց իրականացման միջոցառումները և արդյունքները գնահատելու առանցքային ցուցանիշները: Ռազմավարությունը մշակվել է ՀՀ կառավարության 2019-2023 թվականների ծրագրով ստանձնած հանձնառությունների, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՊՖԿ համակարգի ինքնագնահատման արդյունքների և հետևյալ հիմնական հրապարակումների հիման վրա.

1) «Հայաստանի հանրային կառավարման ոլորտի վերաբերյալ ելակետային գնահատման զեկույց» (Զեկույց) ՍԻԳՄԱ, 2019թ. մարտ,

2) «Հայաստանի Հանրապետությունում Հանրային ներդրումների կառավարման գնահատումը: Տեխնիկական օժանդակության հաշվետվություն» Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ) N°19/33, 2019թ. հունվար,

3) Հայաստանի Հանրապետությունում իրականացված Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության (ՊԾՖՀ-PEFA) գնահատման 2013 թվականի հաշվետվությունը:

¹ Տե՛ս հղումը՝ http://www.minfin.am/hy/page/petakan_tsakhseri_ev_finansakan_hashvetvoghakanutyany_ptsfh_gnahatum/

5. ՊՖԿՀ բարեփոխումների շրջանակներում իրականացվող գործողությունները/միջոցառումները և դրանց իրականացման ժամանակահատվածը ներկայացվում է սույն որոշման հավելված 2-ում (այսուհետ՝ Հավելված 2):

2. ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

6. ՊՖԿՀ բարեփոխումների տեսլականն է՝ ապահովել հանրային բարիքի արդար բաշխում: Դրա համար պետք է ապահովել՝

- 1) կարգավորումների, կանխատեսումների և որոշումների համարժեքություն,
 - 2) հանրային բարիքի հասցեական, արդյունավետ և խնայողաբար օգտագործում,
 - 3) թափանցիկության, հաշվետվողականության և հսկողության ամբողջականություն:
7. ՊՖԿՀ բարեփոխումների նպատակներն են՝

1) ուժեղացնել հարկաբյուջետային կարգապահությունը և բարձրացնել բյուջետային համակարգի կանխատեսելիությունը՝ ձևավորելով մակրոտնտեսական կայունության ապահովման երաշխիքներ,

2) ապահովել հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը՝ մակրոհիմնարարների և հարկաբյուջետային կանոնների հիման վրա ծրագրված քաղաքականությանը համապատասխան՝ հաշվի առնելով, որ շեղումները կարող են առաջացնել ինչպես հարկաբյուջետային, այնպես էլ ընդհանուր մակրոտնտեսական ռիսկեր՝ վտանգելով մակրոտնտեսական կայունությունը, նվազեցնելով պետական կառավարման նկատմամբ վստահելիությունը, ինչպես նաև ունենալ բացասական ազդեցություն ՀՀ վարկանիշի և օտարերկրյա ներդրումների ներգրավման վրա,

3) նվազագույնի հասցնել ծրագրված և փաստացի ցուցանիշների միջև շեղումները՝ սահմանելով մեխանիզմներ, որոնք թույլ կտան բացահայտել բյուջեի կատարման գործընթացում պլանավորվածից շեղումների առաջացման պատճառները և քայլեր ձեռնարկել՝ հետագայում դրանց կանխարգելման համար,

4) երաշխավորել, որ միջոցները կապակցված են հիմնական քաղաքականությունների հետ և համապատասխանում են գերակայություններին և քաղաքականության թիրախներին,

5) ապահովելու հանրային բարիքի օգտագործման հաշվետվողականությունը և թափանցիկությունը:

8. ՊՖԿՀ բարեփոխումների արդիական և կարևոր խնդիրներից է թվայնացումը և տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակակից գործիքների կիրառումը: Միասնական տվյալների բազայի հիման վրա կառուցված Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգը (ԿՖԿՏՀ) կապահովի պետական ֆինանսական կառավարման համակարգի միասնականությունը և ամբողջականությունը:

9. Տեսլականի և նպատակների կյանքի կոչման պատասխանատուն ՀՀ կառավարությունն է, իսկ այդ գործընթացի առաջնորդությունը և կազմակերպումը իրականացնում է ՀՀ ֆինանսների նախարարությունը:

3. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. ՊՖԿ ոլորտում ՀՀ կառավարության 2019-2023 թվականների ծրագրով ստանձնած հանձնառություններ են.

1) Վարկային և դրամաշնորհային ծրագրերի ծախսարդյունավետ կառավարումը,

2) Ներգրաված փոխառու միջոցների օգտագործման ուղղությունների զարգացումը և բարելավումը՝ նպատակ ունենալով այդ միջոցներն ուղղել մարդկային ներուժի և ավելացված արժեք ապահովող ենթակառուցվածքների ձևավորմանը և զարգացմանը, որը հետագայում հնարավորություն կընձեռի մեծացնելու արտահանման ծավալները և կնպաստի տնտեսական աճի առավելագույնս ներառական լինելուն,

3) Ստվերային տնտեսության կրճատմանն ու մրցունակ բիզնես միջավայրի ձևավորմանն ուղղված հարկային քաղաքականության բարելավումը և հարկային վարչարարության արդիականացումը: Նախատեսվում է մշակել և ներդնել հարկային պոտենցիալի և փաստացի հարկերի ճեղքի գնահատման միասնական մեթոդաբանություն, որի արդյունքների հիման վրա կիրականացվի ճեղքի նվազեցման գործողությունների ծրագիր, ինչը հնարավորություն կտա ապահովել հարկեր/ՀՆԱ ցուցանիշի համարժեք մակարդակ,

4) Պետական ֆինանսների նպատակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործումը: Դրան հասնելու նպատակով կներդրվի «հավելյալ արժեքի» ստեղծման գործիքակազմ, որը թույլ կտա պետական ֆինանսների կառավարման համակարգում ծրագրային քանակական ցուցանիշներ սահմանելու մեթոդաբանությունից անցում կատարել որակական ցուցանիշների սահմանմամբ թիրախային բյուջետավորման համակարգի,

5) Ծախսերի նպատակայնության բարձրացման ապահովման համար անցում կկատարվի ռազմավարական պլանավորման համակարգին: Կվերանայվեն գործող ռազմավարությունները, վերջիններս և մշակվելիք բոլոր ռազմավարական փաստաթղթերը համակցվելով Կառավարության հնգամյա ծրագրերի, միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ամենամյա պետական բյուջեի հետ,

6) Ֆինանսական կարգապահության բարելավումը: ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի քանակական և որակական արդյունքային ցուցանիշների գնահատման նպատակով կսահմանվեն հաշվետվողականության մեխանիզմներ, կներդրվի ծախս-արդյունք տրամաբանական կապի ապահովման համակարգ բյուջետային գործընթացում:

7) Պետական կառավարման համակարգի օպտիմալացումը: Մարդկային և նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով կբացահայտնվեն կրկնվող գործառույթները, կհստակեցվեն պետական մարմինների և դրանց ենթակա կազմակերպությունների գործառույթները, որի արդյունքում կբարձրանա պետական մարմինների ծախսարդյունավետությունը և աշխատանքի արդյունավետությունը: Աստիճանաբար կփոխվի ծախսային քաղաքականության տրամաբանությունը՝ պետական կառավարման համակարգի օպտիմալացման ճանապարհով պետական բյուջեն **«աշխատավարձի վճարման»** բյուջեից կվերաժվի **«հանրությանը ծառայությունների մատուցման դիմաց վճարման»** բյուջեի,

8) Մարդկային կապիտալին և ենթակառուցվածքներին ուղղվող ծախսերի տեսակարար կշռի մեծացումը: Մարդկային ռեսուրսների շարունակական զարգացում, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային հմտությունների բարելավմանն ուղղված վերապատրաստումների, դասընթացների և սեմինարների շարունակական կազմակերպում և մասնակցության ապահովում,

9) Պետական բյուջեում կապիտալ ծախսերի տեսակարար կշռի բարձրացում,

10) Պետական գնումների արդար և թափանցիկ համակարգի ներդրում: Կներդրվի էլեկտրոնային գնումների նոր համակարգ, որը թույլ կտա նաև ընդլայնել համակարգը շահագործող պատվիրատուների շրջանակը: Էլեկտրոնային եղանակով կմշտադիտարկվի նաև ապրանքների և ծառայությունների՝ սահմանված ժամկետներում, նախանշված որակով և կարգով մատակարարումը: Շեղումների դեպքում արձանագրված խնդիրների հիման վրա շարունակաբար կկատարելագործվի օրենսդրական դաշտը՝ անհրաժեշտ փոփոխություններն արտացոլելով նաև գնումների էլեկտրոնային համակարգում,²

11) Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի գործարկմամբ կներդրվի ՊՖԿ միասնական էլեկտրոնային համակարգ, որը կապահովի ՊՖԿ համակարգի արդյունավետության բարձրացում, որոշումների կայացման համար անհրաժեշտ տվյալների և տեղեկատվության հուսալիության աստիճանի բարձրացում՝ ի հաշիվ նաև այլ գործող տեղեկատվական համակարգերի հետ հնարավոր փոխգործելիության ապահովման հանգամանքի: Այն իր հերթին կնվազեցնի մարդկային գործոնով պայմանավորված էական սխալների հավանականության աստիճանը,

12) Հանրային ներդրումների կառավարման համակարգի ներդրում,

² Հիշյալ գերակայությունները ամրագրված են ՀՀ կառավարության ծրագրում՝ <https://www.gov.am/files/docs/3133.pdf> և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում՝ <https://www.gov.am/files/docs/3347.pdf>

13) Հանրային ֆինանսների կառավարման բնագավառում կոռուպցիոն երևույթները ծնող պատճառների վերահսկման և վերջիններիս վերացմանը կամ չեզոքացմանն ուղղված գործողությունների իրականացում:

4. ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

11. ՊՖԿՀ բարեփոխումների շրջանակը ընդգրկում է հետևյալ ոլորտները՝

- 1) Հիմնական մակրոտնտեսական ու բյուջետային ցուցանիշների կանխատեսում, հարկաբյուջետային ռիսկերի հաշվետվողականություն.
- 2) Պետական եկամուտների քաղաքականություն, հարկային վարչարարություն,
- 3) Ռազմավարական պլանավորում, միջնաժամկետ ծախսերի ծրագրերի և պետական բյուջեի կազմում, ծրագրային բյուջետավորում,
- 4) Բյուջեի կատարման գործընթացի հսկողություն, գանձապետական համակարգ,
- 5) Պետական պարտք,
- 6) Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում,
- 7) Կորպորատիվ հաշվապահական հաշվառում և աուդիտ,
- 8) Պետական կազմակերպությունների ֆինանսական կառավարում և հսկողություն՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններ (ՊՈԱԿ),
- 9) Պետական գնումներ,
- 10) Պետական ներքին ֆինանսական հսկողություն և ֆինանսաբյուջետային վերահսկողություն,
- 11) Հանրային ակտիվների և հանրային ներդրումների կառավարում,
- 12) Տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական կառավարում,
- 13) Արտաքին վերահսկողություն և աուդիտ,
- 14) ԿՖԿՏՀ ներդրում: Հաշվի առնելով, որ ԿՖԿՏՀ ներդրումը ՊՖԿ հիմնարար և առանցքային բարեփոխումներից է, ուստի վերջինիս ներդրումը կպահանջի վերանայումներ և ներդաշնակեցում ոչ միայն ՊՖԿ գրեթե բոլոր ոլորտներում, այլ նաև վերջինիս համաժամանակեցում ՀՀ բոլոր էլեկտրոնային համակարգերի հետ: Հաշվի առնելով ԿՖԿՏՀ-ի ներդրման կարևորությունը՝ սույն ռազմավորությունում այն ներկայացվում է որպես առանձին ոլորտ/բաղադրիչ:

5. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԹԻՐԱԽՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

12. Սույն ռազմավարությամբ վեր են հանվել ՊՖԿ յուրաքանչյուր ոլորտում առկա խնդիրները և ներկայացվել են դրանց լուծմանն ուղղված այն նպատակները, թիրախներն ու միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն 2019-2023թթ. ընթացքում: ՊՖԿ ոլորտների ռազմավարական թիրախների ապահովման նպատակով ռազմավարության գործողությունների ծրագրով յուրաքանչյուր թիրախի համար սահմանված են պատասխանատու մարմիններ/ստորաբաժանումներ, արդյունքի գնահատման ցուցանիշներ, միջոցառումների իրականացման հետ կապված ռիսկեր և ռիսկերի ուղղությամբ գործողություններ:

6. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ, ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բաղադրիչ 1. Մակրոտնտեսական և բյուջետային ցուցանիշների կանխատեսում

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

Հիմնավոր և հավաստի մակրոտնտեսական ու հարկաբյուջետային շրջանակները հնարավորություն են տալիս մշակել նպատակաուղղված հարկաբյուջետային քաղաքականություն՝ բարձրացնելով դրա արդյունավետությունը և հանրության կողմից պետական քաղաքականության (կառավարության) նկատմամբ վստահությունը՝ ունենալով մի շարք ինստիտուցիոնալ և տնտեսական դրական հետևանքներ:

Այդ տեսանկյունից, մակրոտնտեսական քաղաքականության մշակման գործում կարևոր դերակատարում պետք է ունենա ժամանակակից աշխարհում ընդունված տեսությունների վրա հիմնված և միջազգային պրակտիկայում ընդունելի կանխատեսումների ու վերլուծությունների արդի գործիքակազմը: Այս առումով, ՖՆ-ում գործող և պարբերաբար կատարելագործվող հատվածային մոդելներից զատ, անհրաժեշտություն է առաջացել ներդնել հարկաբյուջետային քաղաքականության միջնաժամկետ և երկարաժամկետ բազմակողմանի ազդեցությունների գնահատման և միջնաժամկետ կանխատեսումների նոր ու ամբողջական գործիքակազմ, որը կհամալրի առկա գործիքակազմը և նոր որակ կհաղորդի ՖՆ կանխատեսումների և վերլուծությունների համակարգին:

Կանխատեսման և հարկաբյուջետային քաղաքականության վերլուծության նոր գործիքակազմի ներդրման նպատակով վերջին տարիներին ԱՄՀ-ի և ՌԴ ՖՆ-ի տեխնիկական աջակցությամբ իրականացվում են DSGE (դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության) մոդելների մշակման և ներդրման աշխատանքներ:

Նշված գործիքակազմի շարունակական կատարելագործման և կիրառման համար ահրաժեշտ են բարձր որակավորում ունեցող կադրեր, թիմային աշխատանք, մասնագետների կարողությունների և հմտությունների շարունակական զարգացմանն ուղղված ներդրումներ: Մինչդեռ համապատասխան որակավորում ունեցող կադրերի պակասը, նոր որակավորված կադրերի ներգրավման դժվարությունները, առկա կադրերի արտահոսքը՝ պայմանավորված ոչ մրցունակ վարձատրության հետ, առաջացնում են ռիսկեր՝ կուտակված փորձի և գիտելիքների կորստի և վերոնշյալ աշխատանքների արդյունավետ իրականացման հետ:

Նպատակը

- Հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության և մակրոտնտեսական կանխատեսումների ու սցենարային վերլուծության որակի բարձրացում

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

- 1) Հարկաբյուջետային քաղաքականության վերլուծության և միջնաժամկետ մակրոտնտեսական կանխատեսումների համար արդիական գործիքակազմի առկայություն,
- 2) Նոր գործիքակազմի ներդրում և օգտագործում բյուջետային գործընթացում,
- 3) Տնտեսության վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցության առավել համապարփակ և ճշգրիտ գնահատականներ և վերլուծություններ,
- 4) Մակրոտնտեսական մակարդակում հարկաբյուջետային ռիսկերի բարելավված գնահատականներ,
- 5) Տնտեսության վրա հարկաբյուջետային քաղաքականության՝ ծրագրվածից շեղումների ազդեցությունների գնահատականներ,
- 6) Համապատասխան որակավորում և հմտություններ ունեցող կադրերի առկայություն:

Թիրախ 1. Մոդել(ներ)ի վերջնական տարբերակների մշակում, ներդրում ՖՆ-ում և ամբողջական գործարկում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. DSGE մոդել(ներ)ի վերջնական տարբերակի մշակում	- Աշխատանքային քննարկումներ - Սեմինարների կազմակերպում (ԱՄՀ, ՌԴ ՖՆ) - Մոդել(ներ)ի մշակման և փորձարկման աշխատանքներ	Հարկաբյուջետային քաղաքականության վերլուծության և միջնաժամկետ մակրոտնտեսական կանխատեսումների համար արդիական գործիքակազմի առկայություն
2. DSGE մոդել(ներ)ի ներդրում և ամբողջական գործարկում	- Պետական բյուջեի և ՄԺԾԾ-ի մշակման փուլերում նոր մոդելի գործարկում - Հարկաբյուջետային քաղաքականության նախատեսվող փոփոխությունների ազդեցության գնահատում նոր գործիքակազմի միջոցով	Նոր գործիքակազմի ներդրում և օգտագործում բյուջետային գործընթացում տնտեսության վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցության առավել համապարփակ և ճշգրիտ գնահատականներ և վերլուծություններ

Թիրախ 2. Մակրոհիմնարարների և հարկաբյուջետային կանոնների հիման վրա ծրագրված և փաստացի իրականացված հարկաբյուջետային քաղաքականության միջև շեղումների ազդեցությունների գնահատում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Ծրագրված և փաստացի իրականացված հարկաբյուջետային քաղաքականության	- Իրականացվող քաղաքականության մշտադիտարկում - Ծրագրված և փաստացի իրականացված հարկաբյուջետային	Մակրոտնտեսական մակարդակում հարկաբյուջետային ռիսկերի բարելավված գնահատականներ

միջև շեղումների բացահայտում և ազդեցությունների գնահատում	քաղաքականությունների համեմատական վերլուծություն Իրականացված հարկաբյուջետային քաղաքականության տնտեսության վրա ունեցած ազդեցությունների գնահատում	Տնտեսության վրա հարկաբյուջետային քաղաքականության՝ ծրագրվածից շեղումների ազդեցությունների գնահատականներ
--	---	--

Թիրախ 3. Համապատասխան որակավորում և հմտություններ ունեցող կադրերի ապահովում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Կադրերի որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում	մասնագիտական կարողությունների և հմտությունների անընդհատ զարգացում և գիտելիքների բազայի շարունակական իրականացում	Համապատասխան որակավորում և հմտություններ ունեցող կադրերի առկայություն

Բաղադրիչ 2. Հարկաբյուջետային ռիսկերի հաշվետվողականություն

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

Հարկաբյուջետային ռիսկերի (ֆիսկալ ռիսկեր) գնահատման գործառույթն առնչվում է պետական մասնակցությամբ ընկերությունների, կարգավորվող հանրային ծառայություններ մատուցող ընկերությունների, ՀՀ պետական բյուջեից վարկեր (ենթավարկեր), երաշխիքներ կամ սուբսիդիաներ ստացող ընկերությունների, ինչպես նաև հիշյալ ոլորտներում ՀՀ կառավարության կողմից պետական-մասնավոր համագործակցության ծրագրերում ներգրավված ընկերությունների³ գործունեության արդյունքում ֆիսկալ հետևանքների պարբերական վերլուծության հետ:

Ֆիսկալ ռիսկերի գործող գնահատման գործընթացը չի ապահովում ֆիսկալ ռիսկերի աղբյուրների ամբողջական ծածկույթ, ինչպես նաև բացակայում են ֆիսկալ ռիսկերի գնահատականի հիման վրա պատասխան գործողությունների իրականացման մեխանիզմները (ռիսկերի նյութականացման հավանականության զսպման կամ դրանց հետևանքների մեղմացման ընթացակարգերի վերաբերյալ համապատասխան առաջարկությունների ներկայացում, իրավասու մարմնի կողմից համապատասխան գործողությունների իրականացում):

Ընդ որում մի շարք միջազգային կազմակերպությունների (ՍԻԳՄԱ-ի Զեկույց, ԱՄՀ, ԱԶԲ և այլն) վերլուծությունների և գնահատականների⁴ համաձայն՝ անհրաժեշտ է հզորացնել ՀՀ ֆինանսների նախարարության ֆիսկալ ռիսկերի գնահատման համար պատասխանատու ստորաբաժանման դերն ու լիազորությունները:

Նպատակը

- Վաղ փուլում տնտեսության ճյուղերում առաջացող առանձին ֆիսկալ ռիսկերի բացահայտում, ֆիսկալ կանխատեսելիության ապահովում

³ 2019 թվականի դրությամբ այդ ենթակառուցվածքային ոլորտների կազմակերպությունները 20-ն են

⁴ The Principles of Public Administration: Armenia. March 2019. SIGMA.

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

- 7) Ֆիսկալ ռիսկերի մշտադիտարկման գործընթացի արդյունավետ իրականացում՝
- Ֆիսկալ ռիսկերի գնահատման ենթակա շրջանակի և բարելավված մեթոդաբանության (գործիքակազմ) առկայություն,
 - Ֆիսկալ ռիսկերի գնահատականի հիման վրա պատասխան գործողությունների (մեղմման/զսպման վերաբերյալ առաջարկություններ) իրականացման մեխանիզմների առկայություն,
- 8) Ֆիսկալ ռիսկերի գնահատող մասնագետների վերլուծական կարողությունների զարգացում:

Թիրախ 4. Ֆիսկալ ռիսկերի գնահատման գործառույթի բարելավում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Ֆիսկալ ռիսկերի գնահատման ծածկույթի ընդլայնում, մեթոդաբանության կատարելագործում	• Ֆիսկալ ռիսկերի գնահատման ծածկույթի ընդլայնում • Միջազգային առաջավոր փորձին համապատասխան մեթոդաբանության բարելավում • Ռիսկերի նյութականացման հավանականության զսպման կամ դրանց հետևանքների մեղմացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման մեխանիզմների մշակում • Ֆիսկալ ռիսկերի գնահատականի հիման վրա պատասխան գործողությունների իրականացում	• Ֆիսկալ ռիսկերի գնահատումները ներառում են Ֆիսկալ ռիսկերի աղբյուրների ընդլայնված շրջանակը • Ֆիսկալ ռիսկերի կատարելագործված մեթոդաբանություն

Թիրախ 5. Ֆիսկալ ռիսկերը գնահատող մասնագետների վերլուծական կարողությունների զարգացում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Կարողությունների զարգացում	• Կարողությունների գնահատում • Կարողությունների զարգացման ծրագրի մշակում և հաստատում • Կարողությունների զարգացում հաստատված ծրագրին համապատասխան	Ֆիսկալ ռիսկերը գնահատող բարելավված վերլուծական կարողություններ ունեցող մասնագետներ

Բաղադրիչ 3. Եկամուտների քաղաքականություն

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

Կառավարությունն իր ծրագրում սահմանել է, որ պետության հարկային քաղաքականությունը պետք է ուղղվի ստվերային տնտեսության կրճատմանը ու մրցունակ բիզնես միջավայրի ձևավորմանը: ՀՀ վիճակագրական կոմիտեի գնահատականի համաձայն չդիտարկվող տնտեսությունը կազմում է ՀՆԱ-ի մոտավորապես 22%-ը⁵: Բացի այդ, հարկային համակարգի հետագա բարեփոխումները պետք է մեծապես հիմնված լինեն ազգային տնտեսության զարգացման առաջնահերթությունների վրա և պետք է կողմնորոշված լինեն դեպի տնտեսության զարգացման տեսանկյունից գերակա համարվող ոլորտների ներդրումային գրավչության ու տնտեսական ակտիվության բարձրացմանը:

Միաժամանակ, գործող հարկային օրենսդրությամբ սահմանված են բազմաթիվ հարկային արտոնություններ և անհրաժեշտ է գնահատել գործող հիմնական հարկային արտոնությունների արդյունավետությունն ու հասցեականությունը, որից հետո գնահատման արդյունքներով ցածր արդյունավետություն ունեցող և հասցեականություն չունեցող հարկային արտոնությունները պետք է վերացվեն:

Հաջորդ խնդիրը կապված է հարկման տարբեր համակարգերի շրջանակներում ձևավորվող հարկային բեռի տարբերություններին: Այսպես, հարկման ընդհանուր համակարգում ձևավորվող հարկային բեռը էականորեն բարձր է շրջանառության հարկի համակարգում ձևավորվող հարկային բեռից, որի արդյունքում տնտեսավարող սուբյեկտները ձգտում են գործունեություն իրականացնել շրջանառության հարկի համակարգում: Շրջանառության հարկի համակարգը պետք է վերածվի/ընկալվի ոչ թե որպես նվազ հարկային բեռով արտոնյալ համակարգ, այլ իրացման շրջանառության որոշակի շեմից ցածր իրացման շրջանառություն ունեցող տնտեսավարող սուբյեկտների գործունեության հարկման «ժամանակավոր» համակարգ, որից դուրս գալը պետք է հանգեցնի հարկային բեռի իջեցման, հետևաբար պետք է տնտեսապես շահավետ լինի: Ընդ որում, շրջանառության հարկի գծով համեմատաբար բարձր հարկային բեռ սահմանելու մոտեցումը հիմնավորվում է նաև տնտեսավարող սուբյեկտների կողմից հարկային հաշվառման վրա ծախսվող ռեսուրսների տնտեսմամբ:

Կարևորվում է նաև գործարքների փաստաթղթավորման հետ կապված խնդիրների կարգավորումը: Գործող օրենսդրության պայմաններում, գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործարքների փաստաթղթավորում գործնականում գրեթե չի իրականացվում: Այս առումով, անհրաժեշտ է ստեղծել գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործարքների փաստաթղթավորման համար նոր՝ գործնականում կիրառելի հնարավորություններ:

Գույքային հարկերի ներուժը Հայաստանի Հանրապետությունում հաջողությամբ չի օգտագործվում: Խոսքը վերաբերում է հատկապես անշարժ գույքի հարկին, որի պարագայում հարկման բազան խիստ թերագնահատված է, ինչն էլ հնարավորություն չի ընձեռում ապահովել անշարժ գույքի միավորների լիարժեք հարկումը: Այս առումով, անհրաժեշտ է գույքային հարկերի համակարգը վերանայել այնպես, որ բարձրարժեք և (կամ) շքեղություն համարվող գույքային միավորների համար սահմանվի տնտեսագիտորեն հիմնավորված՝ խելամիտ հարկային բեռ՝ հիմքում ունենալով դրանց շուկայական արժեքներին մոտարկված գները՝ որպես հարկման բազաներ:

⁵ https://www.armstat.am/Metadata/Pages_Armenian/SM/ArmSMNationalAccounts.htm: Չդիտարկվող տնտեսությունը ներառում է ստվերային, ոչ ֆորմալ և անօրինական տնտեսությունները, ինչպես նաև սեփական սպառման համար տնային տնտեսությունների կողմից թողարկվող ապրանքներն ու ծառայությունները

Մեկ այլ խնդիր է ֆիզիկական անձանց կողմից ստացվող եկամուտների ամբողջական հարկումը: Նշյալ խնդիրը լուծելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում տարիներ շարունակ քննարկվել է եկամուտների համատարած հայտարարագրման համակարգ ներդնելու հարցը: Այս առումով, անհրաժեշտ է ներդնել տնտեսական շարժառիթների հիման վրա գործող եկամուտների հայտարարագրման համակարգ, որի շրջանակներում ֆիզիկական անձինք, հարկման բազայից որոշակի նվազեցումներ կատարելու և տարվա ընթացքում այսպես կոչված «ավել վճարված» հարկի գումարը հետ ստանալու իրենց իրավունքից օգտվելու համար, տարեկան մեկ անգամ կներկայացնեն իրենց համախառն եկամուտների (այդ թվում՝ տարվա ընթացքում հարկային գործակալի կողմից հարկված) վերաբերյալ համախմբված հայտարարագիր:

Նպատակը

- Նպատակ է ազգային տնտեսության զարգացմանը, բարձրացնել ներդրումային գրավչությունը, ինչպես նաև բարձրացնել եկամուտների վերաբաշխման արդյունավետությունը

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

- 9) առկա է տնտեսության զարգացման առաջնահերթություններին ու հնարավորություններին համապահասխան գործող հարկային միջավայր,
- 10) գործող հարկային արտոնությունների շրջանակը կրճատված է,
- 11) շրջանառության հարկի գծով հարկային բեռի վերանայման արդյունքում շրջանառության հարկով հարկման համակարգի համար սահմանված է համարժեք հարկային բեռ,
- 12) գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործարքների փաստաթղթավորման հետ կապված խնդիրները կարգավորված են,
- 13) տեսանելի հարստության կամ ունեցվածքի համարժեք հարկում: Բարձրարժեք և (կամ) շքեղություն համարվող գույքային միավորների համար սահմանված է տնտեսագիտորեն հիմնավորված խելամիտ հարկային բեռ, հիմքում ունենալով դրանց շուկայական արժեքներին մոտարկված գները՝ որպես հարկման բազաներ,
- 14) առկա է տնտեսական շարժառիթների հիման վրա գործող՝ եկամուտների հայտարարագրման համակարգ:

Թիրախ 6. Տնտեսության զարգացման առաջնահերթությունների և հնարավորությունների հիման վրա հարկային միջավայրին ներկայացվող կարիքների գնահատում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1.Տնտեսության զարգացման առաջնահերթությունների ու հնարավորությունների հիման վրա հարկային համակարգի հետագա բարեփոխումների ուղղությունների նախանշում	• Հարկային միջավայրին ներկայացվող կարիքների գնահատման ուսումնասիրությունների իրականացում, • Ուսումնասիրությունների հիման վրա հարկային համակարգի հետագա բարեփոխումների ուղղությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	Հարկային համակարգի հետագա բարեփոխումների ուղղությունները նախանշված են

Թիրախ 7. Հարկային արտոնությունների կիրառության շրջանակի կրճատում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1.«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	- Գործող հիմնական հարկային արտոնությունների արդյունավետության ու հասցեականության գնահատում - Գնահատման արդյունքներով ցածր արդյունավետություն ունեցող և անհասցե հարկային արտոնությունների վերացման առաջարկությունների ներկայացում - ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախագծի մշակում - ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացում	Ցածր արդյունավետություն ունեցող և հասցեականություն չունեցող հարկային արտոնությունները վերացված են

Թիրախ 8. Շրջանառության հարկի գծով հարկային բեռի վերանայում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1.«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	- Շրջանառության հարկի գծով հարկային բեռի բարձրացման ուղղությամբ ուսումնասիրությունների իրականացում - Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա շրջանառության հարկի գծով հարկային բեռի բարձրացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում - ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախագծի մշակում - ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացում	Իրականացվող ուսումնասիրությունների արդյունքում շրջանառության հարկի բեռը վերանայված է

Թիրախ 9. Գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործարքների փաստաթղթավորման հետ կապված խնդիրների կարգավորում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1.«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	- Գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործարքների փաստաթղթավորման համար ուսումնասիրությունների իրականացում - Գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործարքների փաստաթղթավորման համար առաջարկությունների ներկայացում	Գործարքների փաստաթղթավորման հետ կապված խնդիրները կարգավորված են

	• ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախագծի մշակում • ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացում	
--	--	--

Թիրախ 10. Տեսանելի հարստության կամ ունեցվածքի համարժեք հարկում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1.«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	• Գույքային հարկերի համակարգի վերանայման ուսումնասիրությունների իրականացում • Գույքային հարկերի համակարգի վերանայման առաջարկությունների ներկայացում • ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախագծի մշակում • ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացում	Տեսանելի հարստության կամ ունեցվածքը հարկվում է համարժեք

Թիրախ 11. Տնտեսական շարժառիթների հիման վրա գործող՝ եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրման իրավական հիմքերի ապահովում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1.«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	• Հարկային նվազեցումների՝ որպես հարկային խթանների հիման վրա գործող՝ եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրման ուսումնասիրությունների իրականացում • Հարկային նվազեցումների՝ որպես հարկային խթանների հիման վրա գործող՝ եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրման առաջարկությունների ներկայացում • ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախագծի մշակում • ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացում	Տնտեսական շարժառիթների հիման վրա գործող՝ եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրման իրավական հիմքերն ապահովված են

Բաղադրիչ 4. Եկամուտների վարչարարության թափանցիկություն և համապատասխանություն

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

Հարկային մարմինը հետևողական ու շարունակական պայքար է մղելու ստվերային տնտեսության դեմ: Բացի այդ, հարկային վարչարարությունը պետք է լինի ոչ խտրական՝ դրանով իսկ երաշխավորելով արտոնյալ կարգավիճակ ունեցող հարկ վճարողների բացառումը և բոլոր հարկ վճարողների համար գործունեության հավասար հարկային միջավայրի ստեղծումը:

Ներկայումս չեն հրապարակվում պետական բյուջեից վերադարձված հարկերի գումարների վերաբերյալ տվյալները: Հարկ վճարողներին հասանելի չէ պետական բյուջե վճարված հարկերից հարկ վճարողներին վերադարձված գումարների մասին տեղեկատվությունը: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից եկամուտների և/կամ ծախսերի վերաբերյալ հրապարակվող տեղեկատվության հետ միասին անհրաժեշտ է հրապարակել նաև բյուջեից վերադարձվող հարկերի գումարների վերաբերյալ տեղեկատվությունը՝ բյուջետային գործընթացների ամբողջականությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով: Հարկային մարմինն այլ պետական մարմիններից հարկման համար կարևոր նշանակություն ունեցող տեղեկությունները ստանում է գործարքների իրականացմանը հաջորդող ժամանակահատվածներում, իսկ որոշ դեպքերում չի ստանում հարկման տեսանկյունից էական նշանակություն ունեցող առանձին տեղեկություններ:

Նպատակը

- Հարկային վարչարարության արդյունավետության բարձրացում և ստվերային տնտեսության ծավալների կրճատում, պետական եկամուտների կայուն աճի ապահովում

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

- 15) երեք խոշոր հարկատեսակների գծով (ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ) հարկային պոտենցիալի և ճեղքի գնահատականներ,
- 16) բյուջետային եկամուտների հավաքագրման գործընթացների թափանցիկության ապահովում,
- 17) ստվերային տնտեսության ծավալների շարունակական կրճատում, արտոնյալ հարկ վճարողների բացառում,
- 18) հարկ վճարողների կողմից հարկային պարտավորությունների ամբողջ ծավալով և ժամանակին հայտարարագրման ու կատարման ապահովում:

Թիրախ 12. Հարկային պոտենցիալի և ճեղքի գնահատում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1.Երեք խոշոր հարկատեսակների գծով (ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ) հարկային պոտենցիալի և ճեղքի գնահատում	• Երեք խոշոր հարկատեսակների գծով (ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ) հարկային ճեղքի գնահատման մեթոդաբանության մշակում • Անհրաժեշտ տեղեկատվության կուտակում • Մեթոդաբանության կատարելագործում • Գնահատումների իրականացում	• Երեք խոշոր հարկատեսակների գծով (ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ) հարկային պոտենցիալի և ճեղքի գնահատման մեթոդաբանության առկայություն • Երեք խոշոր հարկատեսակների գծով (ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ)

		հարկային պոտենցիալի և ճեղքի գնահատականներ
--	--	---

Թիրախ 13. Հանրային ֆինանսների թափանցիկության ապահովման նպատակով բյուջեից վերադարձվող հարկերի գումարների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Եռամսյակային պարբերականությամբ պետական բյուջեից վերադարձված հարկերի գումարների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում	- Համապատասխան տեղեկատվության հավաքագրում - Ամփոփում և հրապարակում	Հրապարակված համապատասխան տեղեկատվություն

Թիրախ 14. Ստվերային տնտեսության ծավալների շարունակական կրճատում, արտոնյալ հարկ վճարողների բացառում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Երրորդ անձանցից տեղեկությունների ստացման և արդյունավետ օգտագործման հնարավորությունների ընդլայնում	ՀՀ պետական մարմինների հետ արդյունավետ համագործակցության ուղղությամբ աշխատանքների իրականացում, ինչը կնպաստի տեղեկատվության փոխանակման հիման վրա ոլորտային հսկողության արդյունավետության բարձրացմանը	- Հարկային ստվերի կրճատում - Արտոնյալ կարգավիճակ ունեցող հարկ վճարողների բացառում և բոլոր հարկ վճարողների համար գործունեության հավասար հարկային միջավայրի ստեղծում

Թիրախ 15. Հարկ վճարողների կողմից հարկային պարտավորությունների ամբողջ ծավալով և ժամանակին հայտարարագրման ու կատարման ապահովում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Հարկային մարմնի վերլուծական և հսկողության գործիքների արդիականացում և կարողությունների զարգացում	Հարկային հսկողության արդի պայմաններին համապատասխանեցնելու նպատակով պարբերաբար վերլուծական և հսկողական գործառույթների իրականացման ընթացակարգերի վերանայում	Հարկային մարմնի աշխատակազմը ունի հարկային օրենսդրությունը կիրարկելու համար անհրաժեշտ կարողություններ

		• Առկա է վերանայված և մշտապես կատարելագործվող հարկային հսկողության գործիքակազմ
--	--	--

8. ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ, ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱԶՄՈՒՄ

Բաղադրիչ 5. Ծրագրային բյուջետավորում և ռազմավարական պլանավորում

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

Չնայած այն հանգամանքին, որ 2019 թվականի պետական բյուջեն կազմվել և հաստատվել է ԾԲ պահաջներին համապատասխան, այնուամենայնիվ բյուջետային ծրագրերի կապն ու ներդաշնակությունը ռազմավարական պլանավորման համակարգի հետ դեռևս ամբողջությամբ ապահովված չի: Դա հատկապես վերաբերվում է բյուջետային ծրագրերի նպատակների և համապատասխան արդյունքային ցուցանիշների սահմանմանը և ռազմավարական պլանավորման համակարգի հետ վերջիններիս ներդաշնակեցմանը:

ՀՀ-ում ռազմավարական պլանավորման գործընթացի կազմակերպման և բյուջետավորման գործընթացի հետ ներդաշնակեցման մեխանիզմները սահմանվում են ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 42-45 արձանագրային որոշմամբ, որով կանոնակարգվում է պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման գործընթացը: Վերջինս սահմանում է ռազմավարական փաստաթղթերի մշակման և ներկայացման միասնական ընթացակարգեր, հիերարխիա, կառուցվածքներ՝ հիմնականում նպատակ ունենալով ապահովել հստակ կապը ռազմավարական փաստաթղթերի և բյուջետային ծրագրերի միջև, որի հիմքում դրված է նաև ԾԲ բարեփոխումների տրամաբանությունը: Այդ առումով, ՀՀ կառավարության 2019-2023թթ գործունեության միջոցառումների ծրագրի համաձայն ՀՀ պետական իշխանության մարմինները նախաձեռնել են իրենց ոլորտային ռազմավարությունների վերանայման և մշակման աշխատանքները, որի հիմքում դրված են վերոհիշյալ որոշմամբ սահմանված մոտեցումները, որն առաջ է բերում գոյություն ունեցող բյուջետային ծրագրերի վերանայման և բովանդակային առումով վերանայված ռազմավարական փաստաթղթերին համապատասխանեցման անհրաժեշտություն:

Բյուջետային ծրագրի գնահատումը ենթադրում է ծրագրի վերաբերյալ տեղեկատվության ստացման, վերլուծության և օգտագործման համակարգված եղանակ, որի նպատակն է պատասխանել ծրագրի արդյունավետության և օգտավետության վերաբերյալ հարցերին: Ներկայումս բյուջետային ծրագրերի գնահատման կանոնավոր գործընթացներ ներդրված չեն, ինչը սահմանափակում է բյուջետային ծրագրերի ազդեցությունը և արդյունքները գնահատելու ՀՀ կառավարության հնարավորությունը: ԾԲ բարեփոխումների շրջանակում բյուջետային ծրագրերի վերանայմանն ու ռազմավարական պլանավորման համակարգին ներդաշնակեցմանը հաջորդող կարևոր քայլ է հանդիսանում բյուջետային ծրագրերի ազդեցության և արդյունավետության պարբերական և կանոնավոր գնահատման գործընթացի ներդրումը:

Չնայած ՀՀ պետական բյուջեն կազմվում և հաստատվում է ԾԲ պահանջներին համապատասխան, այնուամենայնիվ, պետական մարմիններում առկա մասնագիտական կարողությունները դեռևս բավարար չեն ԾԲ պայմաններում արդյունավետ կերպով բյուջետավորում և արդյունքների վրա հիմնված պլանավորում իրականացնելու համար:

Նպատակները

- առկա ռազմավարական փաստաթղթերով իրականացվող քաղաքականությունների հետ բյուջետային ծրագրերի համապատասխանություն
- բյուջետային ծրագրերի արդյունավետության և օգտավետության գնահատման կանոնավոր գործընթացի առկայություն

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

- 19) բյուջետային ծրագրերի նպատակներն ու արդյունքային ցուցանիշները բխում են գործող ոլորտային ռազմավարություններից և ծածկում են բյուջետային եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ենթադրող ռազմավարությունները,
- 20) բյուջետային գործընթացը ներառում է բյուջետային ծրագրերի արդյունավետության և օգտավետության գնահատման կանոնավոր գործընթացներ:

Թիրախ 16. 2023թ. պետական բյուջեում ներառված բոլոր բյուջետային ծրագրերի նպատակներն ու արդյունքային ցուցանիշները համապատասխանում են գործող ոլորտային ռազմավարություններին և ծածկում են բյուջետային եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ենթադրող բոլոր գործող ռազմավարությունները

Միջոցառում	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշներ
1. Բյուջետային ծրագրերի վերանայում/մշակում՝ առկա ռազմավարական փաստաթղթերով իրականացվող քաղաքականություններին համապատասխան	• Առկա բյուջետային ծրագրերի ուսումնասիրում՝ գործող ռազմավարական փաստաթղթերին համապատասխանության գնահատում և ըստ անհրաժեշտության բյուջետային ծրագրերի բովանդակության և կառուցվածքների վերանայում • Բյուջետային ծրագրերի անձնագրերի մշակման և հաստատման պաշտոնական գործընթացների մշակում և ներդրում • Վերանայված/նոր մշակված բյուջետային ծրագրերի համար անձնագրերի մշակում/վերանայում	• Համապատասխանության վերաբերյալ գնահատականի առկայություն, • 2023թ. պետական բյուջեում ներառված բոլոր ծրագրերը համապատասխանեցված են գործող ռազմավարություններին • 2023թ. բյուջետային ծրագրերը ամբողջությամբ ծածկում են բյուջետային եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ենթադրող բոլոր գործող ռազմավարությունները • 2023թ. պետական բյուջեում ներառված բոլոր ծրագրերը (բացառությամբ

		վարչական բնույթի ծրագրերից) ունեն ծրագրի անձնագրեր, որոնք 2023թ. պետական բյուջեի նախագծին կից ներկայացվում են ՀՀ ԱԺ
2. ԾԲ ներկայիս մեթոդաբանության և դրա կիրարկման հետ կապված գործնական խնդիրների վերհանում և կարգավորում	• ԾԲ մեթոդաբանության և դրա կիրառության հետ կապված առկա բացերի և խնդիրների վերհանման նպատակով ուսումնասիրության իրականացում • Բացահայտված խնդիրների կարգավորման միջոցառումների ցանկի և ժամանակացույցի մշակում • Միջոցառումների ցանկին և ժամանակացույցին համապատասխան ԾԲ մեթոդաբանության բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում	• ԾԲ մեթոդաբանության և դրա կիրառության հետ կապված առկա բացերի և խնդիրների ուսումնասիրության հաշվետվության առկայություն • ԾԲ մեթոդաբանության և դրա կիրառության բարելավման միջոցառումների ցանկի և ժամանակացույցի առկայություն • ԾԲ մեթոդաբանության բարելավմանն ուղղված միջոցառումներն իրականացված են միջոցառումների ժամանակացույցին համապատասխան
3. Մարդկային ռեսուրսների զարգացմանն ուղղված միջոցառումներ	• ԾԲ ներդրված համակարգի պահանջներին համարժեք՝ առկա մարդկային ռեսուրսների գծով ինստիտուցիոնալ կարողությունների պարբերական գնահատում, • Ըստ անհրաժեշտության կարողությունների զարգացման գործող ծրագրի վերանայում • Կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում հաստատված/վերանայված ծրագրին համապատասխան	• ԾԲ ներդրված համակարգի պահանջներին համարժեք՝ առկա մարդկային ռեսուրսների գծով ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման հաշվետվություն(ներ), • Կարողությունների զարգացման արդիական ծրագրի առկայություն • Կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներն իրականացված են հաստատված ծրագրին համապատասխան

Թիրախ 17. 2023թ. բյուջետային տարվա ավարտի դրությամբ բյուջետային ծրագրերի համար պատասխանատու բոլոր պետական մարմիններում առկա է բյուջետային ծրագրերի գնահատման կանոնավոր գործընթաց

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Բյուջետային ծրագրերի գնահատմանն ուղեցույցների մշակում	• ՀՀ բյուջետային գործընթացում բյուջետային ծրագրերի գնահատման գործառույթի ներդրման նպատակով ուսումնասիրության իրականացում և հայեցակարգի մշակում • Հայեցակարգի հիման վրա բյուջետային ծրագրերի գնահատմանն ուղեցույցների մշակում	• Բյուջետային ծրագրերի գնահատման հայեցակարգը առկա է • Բյուջետային ծրագրերի գնահատմանն ուղեցույցները մշակված են
2. Բյուջետային ծրագրերի գնահատման կանոնավոր գործընթացի ներդրում	• Գնահատման գործառույթների ներդրման ժամանակացույցի և միջոցառումների մշակում • Գնահատման գործառույթների ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացում • Գնահատմանն ուղեցույցներին համապատասխան բյուջետային ծրագրերի գնահատում	• Բյուջետային ծրագրերի գնահատման գործառույթների ներդրման ժամանակացույցի և միջոցառումների առկայություն • 2023թ. բյուջետային տարվա ավարտի դրությամբ բյուջետային ծրագրերի համար պատասխանատու յուրաքանչյուր պետական մարմնում առկա է ծրագրերի գնահատման կանոնավոր գործընթաց • 2023թ. բյուջետային տարվա ավարտի դրությամբ բյուջետային ծրագրերի համար պատասխանատու յուրաքանչյուր պետական մարմնի կողմից իրականացվող առնվազն 1 բյուջետային ծրագրի փորձնական կարգով գնահատված է հաստատված ուղեցույցներին համապատասխան

Բաղադրիչ 6. ՄԺԾԾ գործընթաց, բյուջետային կարգապահություն և թափանցիկություն

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

ՀՀ 2020թ. բյուջետային գործընթացի շրջանակներում ՀՀ պետական մարմինները 2020-2022թթ. ՄԺԾԾ (ներառյալ ՀՀ 2020թ. պետական բյուջեի) հայտերը ՖՆ ներկայացնելիս պահանջ է դրվել, որ ծախսային առաջարկները ներկայացվեն տարանջատված՝ ըստ բյուջետային ծախսերի

հիմքում դրված ծախսային պարտավորությունների բնույթի (պարտադիր և հայեցողական պարտավորություններ) և ըստ դրանց իրականացման առաջնահերթությունների: Դա նպատակ ունի ողջ բյուջետային գործընթացում ծախսային պարտավորությունները դիտարկել և ծախսային քաղաքականության վերաբերյալ որոշումներն ընդունել՝ հաշվի առնելով նաև այդ ծախսերի հետ կապված ՀՀ կառավարության հայեցողականության և ճկունության մակարդակը: Այս մոտեցումը 2020թ. բյուջետային գործընթացի ժամանակ կիրառվել է փորձնական կարգով, և ներկայումս դեռևս կանոնակարգված չեն բյուջետային ծրագրերի շրջանակներում իրականացվող պարտադիր և հայեցողական ծախսերի տարանջատման ու բյուջետային փաստաթղթերում դրանց չափերի և շրջանակների ներկայացման ընթացակարգերը:

ՀՀ 2020թ. բյուջետային գործընթացի համար ՀՀ կառավարությունը վերանայել է նաև բյուջետային գործընթացի փուլերը, ժամկետները և մոտեցումները՝ սահմանելով ՄԺԾԾ և տարեկան բյուջեների կազմման մեկ միասնական գործընթաց, որի նպատակն է բարձրացնել գործընթացի արդյունավետությունը՝ բացառելով դրանում առկա խզումներն ու կրկնությունները: Ավելին, այդ գործընթացում նախատեսվել և իրականացվել են միջոցառումներ ՄԺԾԾ և տարեկան բյուջեի կազմման գործընթացին քաղաքացիական հասարակության կառույցների գործունե մասնակցությունը խթանելու, ինչպես նաև ՀՀ ԱԺ-ում բյուջետային փաստաթղթի քննարկման ժամանակահատվածը ընդլայնելու համար: Այդ առումով ՀՀ կառավարությունը հետևողականորեն շարունակելու է իրականացնել բյուջետային գործընթացի բարելավման ուղղությամբ նախաձեռնած վերոհիշյալ բարեփոխումները:

Պետական բյուջեն բարդ ֆինանսական փաստաթուղթ է, որի ընկալումը պահանջում է որոշակի մասնագիտական գիտելիքների առկայություն, ինչը առանց լրացուցիչ ջանքերի հասանելի և ընկալելի չէ հասարակության անդամների լայն շրջանակի համար: Այդ նպատակով, պետական բյուջեի հիմնական փաստաթղթին զուգահեռ անհրաժեշտ է շրջանառել նաև հանրության լայն շրջանակների համար հասանելի՝ պարզեցված (քաղաքացու) բյուջե:

Նպատակները

- պետության պարտադիր պարտավորություններին առնչվող ծրագրերի/միջոցառումների նույնականացում
- ՄԺԾԾ և տարեկան բյուջեի կազմման մեկ միասնական գործընթացի ներդրում
- բյուջետային գործընթացում քաղաքացիական հասարակության կառույցների մասնակցային դերի բարձրացում
- բյուջետային տեղեկատվության հասանելիություն և հանրության իրազեկվածություն

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

- 21) պետության պարտադիր պարտավորություններից բխող ծրագրերը/միջոցառումները նույնականացված և հաշվառված են,
- 22) ՄԺԾԾ և տարեկան բյուջեի կազմման մեկ միասնական գործընթացի առկայություն
- 23) պարզեցված բյուջեն և բյուջեի կատարման մասին պարզեցված հաշվետվությունները հասանելի են հանրության համար,
- 24) քաղաքացիական հասարակության կառույցներն ավելի գործունե մասնակցություն ունեն բյուջետային գործընթացում,

Թիրախ 18. Պետության պարտադիր պարտավորություններից բխող ծրագրերը/միջոցառումները նույնականացված և հաշվառված են

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Պետության պարտադիր պարտավորություններից բխող ծրագրերի/միջոցառումների նույնականացում և հաշվառում	- Համապատասխան մեթոդաբանության մշակում - Պարտադիր պարտավորությունների հաշվառման և դրանցում փոփոխությունների կատարման ընթացակարգերի մշակում - Մեթոդաբանությանը համապատասխան, պետության պարտադիր պարտավորությունների ուսումնասիրում, նույնականացում և հաշվառում	- Համապատասխան մեթոդաբանությունը առկա է - Ընթացակարգերը մշակված են 2022 թվականի բյուջետային գործընթացի շրջանակներում պետության պարտադիր պարտավորությունները նույնականացված և հաշվառված են

Թիրախ 19. ՄԺԾԾ և տարեկան բյուջեի կազմման միասնական գործընթացի ներդրում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. ՄԺԾԾ և տարեկան բյուջեի կազմման մեկ միասնական գործընթացի ապահովման համար իրավական հիմքերի ստողծում և մեթոդաբանության մշակում	Բյուջետային գործընթացի ժանմանակացույցի և բյուջետային հայտերի կազմման մեթոդական ցուցումների մշակում՝ նախատեսելով ՄԺԾԾ և տարեկան բյուջեների կազմման մեկ միասնական գործընթաց	ՄԺԾԾ և տարեկան բյուջեի կազմման աշխատանքներն իրականացվում են մեկ միասնական գործընթացով

Թիրախ 20. Պարզեցված բյուջեն և բյուջեի կատարման մասին պարզեցված հաշվետվությունները առկա են և հասանելի են հանրության համար

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Պետական բյուջեի և պետական բյուջեի կատարման հաշվետվության պարզեցված տարբերակի մշակում և հանրայնացում	Տվյալ տարվա պետական բյուջեի և բյուջեի կատարման հաշվետվության պարզեցված տարբերակի մշակում և զետեղում ՖՆ www.minfin.am պաշտոնական կայքում, նախորդ տարվա պարզեցված պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության տեղադրում ՖՆ www.minfin.am պաշտոնական կայքում: Պարզեցված բյուջեի և	2021 թվականի պարզեցված բյուջեն և բյուջեի կատարման մասին հաշվետվությունները հրապարակված են ՀՀ ՖՆ պաշտոնական կայքում - Պարզեցված բյուջեի և բյուջեի կատարման մասին պարզեցված հաշվետվությունների վերաբերյալ ՔՀԿ-ների հետ կազմակերպվել են

	բյուջեի կատարման մասին պարզեցված հաշվետվությունների ներկայացում ՔՀԿ-ներին և դրանց շուրջ քննարկում (յուրաքանչյուր փաստաթղթի համար առնվազն 1 բաց քննարկում)	քննարկումներ (տարեկան առնվազն 2 անգամ)
--	---	--

Թիրախ 21. Քաղաքացիական հասարակության կառույցներն ավելի գործուն մասնակցություն ունեն բյուջետային գործընթացում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Բյուջետային հայտերի վերաբերյալ տեղեկատվության հանրայնացում	ՀՀ պետական մարմինների բյուջետային հայտերի հրապարակում վերջիններիս ինտերնետային կայքերում ՔՀԿ-ների համար հասանելի տեղում	ՀՀ պետական մարմինների բյուջետային հայտերը տեղադրված են վերջիններիս ինտերնետային կայքերում և հասանելի են ՔՀԿ-ների համար
2. Բյուջետային հայտերի շուրջ ՔՀԿ-ների հետ քննարկման հարթակ(ներ)ի ձևավորում	- ՀՀ պետական մարմիններում հարթակների ձևավորում, որտեղ վերջիններս ՔՀԿ-ների հետ ակտիվ քննարկումներ են ծավալում բյուջետային հայտերի, ոլորտային ռազմավարությունների հետ դրանց կապի, հայտերում ներկայացված ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների շուրջ - Բյուջետային հայտերի շուրջ ՔՀԿ-ների հետ քննարկումների արդյունքների ներառում ՀՀ պետական մարմինների բյուջետային հայտերում	- ՀՀ պետական մարմինները ունեն բյուջետային հայտերը ՔՀԿ-ների հետ քննարկելու հարթակներ - ՀՀ պետական մարմինների բյուջետային հայտերը ներառում են ՔՀԿ-ների հետ հայտերի շուրջ իրականացված քննարկումների արդյունքները

Բաղադրիչ 7. Բյուջետային ծրագրերի ծախսերը կազմելու հաշվարկման գործընթացի ավտոմատացում

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

Բյուջետային գործընթացի շրջանակում բյուջետային ծրագրերի/միջոցառումների գծով ծախսերի հաշվարկման և ֆինանսական ծրագրավորման աշխատանքները կազմակերպվում են համապատասխան պետական մարմինների կողմից՝ հիմք ընդունելով բազմաթիվ ելակետային տվյալներ, այդ թվում՝ որոշակի ծախսերի հաշվարկման համար ՀՀ կառավարության առանձին որոշումներով հաստատված նորմատիվային ցուցանիշները: Ներկայումս բյուջետային

ծրագրերի/միջոցառումների ծախսակազմման հիշյալ գործընթացներում ներառված բազմաթիվ գործառույթներ չունեն բավարար ավտոմատացում, ինչը բյուջետային ծրագրերի ծախսակազմման փուլում մեծացնում է բյուջետային հսկողության ռեսուրսատարությունը, սխալների կատարման և շեղումների հավանականությունը՝ դրանով իսկ նվազեցնելով պետական ֆինանսների կառավարման արդյունավետությունը: Այդ առումով, ՀՀ ՖՆ-ն նախաձեռնել է բյուջետային ծրագրերի ծախսակազմման ավտոմատացման համակարգի նախագծման աշխատանքները, որոնք ներկայումս ընթացքի մեջ են: Ենթադրվում է, որ բյուջետային ծրագրերի ծախսակազմման ավտոմատացված համակարգը հետագայում կինտեգրվի ԿՖԿՏՀ-ին:

Նպատակը

- բյուջետային ծրագրերի/միջոցառումների գծով ծախսերի հաշվարկման (ծախսակազմման) միասնական մեխանիզմի կիրառում

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

25) բյուջետային ծրագրերի/միջոցառումների ծախսակազմման միասնական ավտոմատացված համակարգի առկայություն

Թիրախ 22. 2023 թվականի բյուջետային գործընթացի շրջանակներում բյուջետային ծրագրերի/միջոցառումների հաշվարկման (ծախսակազմման) գործընթացներն իրականացվում են միասնական ավտոմատացված համակարգի միջոցով

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ավտոմատացված համակարգի փուլային ներդրում	- Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ավտոմատացված համակարգի փորձարկում - Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ավտոմատացված համակարգի ամբողջական ներդրում	- Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ավտոմատացված համակարգը փորձարկված է և պարտրաստ է ներդրման 2023 թվականի բյուջետային գործընթացի շրջանակներում բյուջետային ծրագրերի ծախսակազմումներն իրականացվել են միասնական ավտոմատացված համակարգի միջոցով

9. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ, ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Բաղադրիչ 8. Բյուջեների կատարման հաշվետվություններ

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

Բյուջեների կատարման մասին հաշվետվությունների էլեկտրոնային համակարգը ներդրվել է 2011-2015թթ. ընթացքում, որը զգալիորեն կրճատել է հաշվետվությունների պատրաստման վրա ծախսվող ժամանակը, բարձրացրել է հաշվետվությունների որակը, ինչպես նաև բարձրացրել է պետական մարմինների պատասխանատվության աստիճանը՝ հաշվետվությունները ժամանակին և արժանահավատ ներկայացնելու առումով: Հաշվի առնելով, որ 2019 թվականից սկսած բյուջեների կատարման հետ կապված հաշվետվությունները պետք է ներկայացվեն նաև ծրագրային ձևաչափով, անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ կատարել բյուջեների կատարման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց ենթակա հիմնարկների ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների կազմման, ներկայացման, ամփոփման ընդհանուր պայմաններում, ինչպես նաև հաշվետվությունների առանձին տեսակների կազմման ու ներկայացման առանձնահատկությունների հրահանգում (ընդունվել է ՀՀ ՖՆ նախարարի 2019թ. մարտի 13-ի թիվ 264-Ն հրամանով): Սակայն դեռևս լուծված չէ ծրագրային բյուջետավորման պահանջներին համապատասխան էլեկտրոնային համակարգի միջոցով բյուջետային հաշվետվությունների ստացման և ներկայացման հարցը:

Նպատակը

- 2019թ. սկսած՝ էլեկտրոնային համակարգի միջոցով ծրագրային դասակարգմամբ ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունների կազմում

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

26) Էլեկտրոնային համակարգի միջոցով ծրագրային դասակարգմամբ ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունների առկայություն

Թիրախ 23. Ծրագրային դասակարգմամբ ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունների կազմում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշներ
1. Բյուջետային հաշվետվությունների էլեկտրոնային համակարգի համապատասխանեցում ծրագրային բյուջետավորման պահանջներին	• Համակարգի փորձարկում • Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների (ԲԳԿ)՝ հաշվետվությունները պատրաստող մասնագետների համար դասընթացների կազմակերպում • Համակարգի շահագործման ընթացքում խնդիրների բացահայտում, դրանց լուծմանն ուղղված արձագանքների ներկայացում	Ծրագրային դասակարգմամբ ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունների առկայություն

Բաղադրիչ 9. Ծախսերի ապառքների մշտադիտարկում և կառավարում

Ծախսերի ապառքները դրանք ժամկետանց պարտքերն են և պարտավորությունները, որոնք ըստ էության համարվում են թերի կատարված ֆինանսավորում: ՀՀ պետական բյուջեից վճարումները իրականացվում են ՀՀ օրենսդրությամբ (օրինակ՝ աշխատավարձ, կենսաթոշակներ, նպաստներ և այլն), գնումների և դրամաշնորհների պայմանագրերով սահմանված և պարտքի սպասարկմամբ նախատեսված ժամկետներում: **Չվճարված պահանջը կամ պարտավորությունը դառնում է ապառք, եթե վճարումները չեն իրականացվել պայմանագրերով, կամ ՀՀ օրենսդրությամբ, կամ ֆինանսական այլ կանոնակարգերով սահմանված ժամկետներում:** Ծախսերի ապառքներ չեն համարվում պետական հատվածի տարբեր մակարդակների կողմից միմյանց նկատմամբ կատարվող վճարումների կամ փոխանցումների ուշացումները:

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

Հանրային ֆինանսների արդյունավետ կառավարումը ենթադրում է նաև ծախսերի ապառքների կառավարման գործուն համակարգի առկայություն, որի նպատակն է հավաստիանալ, որ բոլոր գործարքները և դրանց հետ կապված պարտավորությունները (ներառյալ ժամկետանց) հաշվառվում են: Թեպետ ՀՀ ՖՆ-ը ստանում և հաշվառում է ՀՀ պետական մարմինների ծախսային պարտավորությունների գծով ժամկետանց պարտքերի վերաբերյալ տեղեկատվությունը, սակայն վերջինս չի ներառվում ՀՀ պետակա բյուջեի կատարման հաշվետվություններում և պաշտոնապես չի հրապարակվում⁶: Այդ առումով, կարևոր է, որ ծախսերի ապառքները կանոնավոր կերպով ենթարկվեն մշտադիտարկման և հսկողության⁷, իսկ դրանց վերաբերյալ տեղեկատվությունը լինի հասանելի հանրությանը:

Նպատակը

- ծախսերի ապառքների մշտադիտարկում և հաշվետվողականության ապահովում

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

- 27) ՀՀ հանրային իշխանության և տարածքային կառավարման մարմինները պարբերաբար իրականացնում են հսկողություն ՀՀ պետական բյուջեից կատարվող վճարումների ժամկետների նկատմամբ
- 28) Ծախսերի գծով ապառքների գումարների մասին տվյալները հասանելի են

Թիրախ 24. Ծախսերի ապառքների հաշվառում և մշտադիտարկում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշներ
Ծախսերի ապառքների հաշվառում և մշտադիտարկում	• ՀՀ պետական բյուջեից իրականացվող վճարումների ժամկետների հաշվառում	• ՀՀ հանրային իշխանության և տարածքային

⁶ ՍԻԳՄԱ-ի Զեկույց

⁷ ՊԾՖՀ-ի 2016թ., https://pefa.org/sites/default/files/PEFA%20Framework_English_Web_Dec18_Second%20Edition.pdf

	• Եռամսյակային պարբերականությամբ ապառքների վերաբերյալ հաշվետվությունների տրամադրում ՖՆ-ին • Ապառքների վերաբերյալ տեղեկատվության ներառում ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում	կառավարման մարմինները իրականացնում են ծախսերի գծով ապառքների հաշվառվում • Ապառքների վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում
--	--	---

Բաղադրիչ 10. Աշխատավարձի ֆոնդի հսկողություններ

ՊԾՖՀ-2016-ը պահանջում է հանրային ծառայողների աշխատավարձի վճարման, կառավարման, փոփոխությունների կատարման, անձնակազմի կառավարման հետ կապված տվյալների հաշվառման և դրանց փոխկապակցվածության համապատասխանությանը:

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

2013 թվականին իրականացված ՊԾՖՀ-PEFA գնահատմամբ «ԿՑ-23 Աշխատավարձի ֆոնդի հսկողություններ» կատարողական ցուցանիշը ստացել է «D+» գնահատականը, որը պայմանավորված է ճյուղային նախարարությունների աշխատավարձերի տվյալների և անձնակազմի գրանցումների միջև ժամանակին կատարվող համադրման բացակայությամբ, ինչպես նաև նրանով, որ այս երկուսի միջև ոչ էլեկտրոնային կապերի պատճառով համադրման գործընթացը դառնում է շատ ժամանակատար:

Ինչպես նշվում է ՊԾՖՀ-2013 գնահատման զեկույցում (ԿՑ-18. Աշխատավարձի ֆոնդի վերահսկման արդյունավետությունը)՝ ծախսերի հիմնական բաղադրիչ հանդիսացող աշխատավարձի ֆոնդի արդյունավետ հսկողությունը հուսալի ֆինանսական կառավարման կարևոր ցուցանիշներից մեկն է:⁸

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված 1,648,089,778.9 հազ. դրամ գումարից աշխատավարձի ֆոնդի տարեկան գումարը կազմում է 168,077,058.6 հազ. դրամ⁹, որը կազմում է տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված ծախսերի մոտավորապես **10.2 տոկոսը**: Սա բարձր ցուցանիշ է, և ներկայումս ընթացող ՀՀ կառավարման համակարգի օպտիմալացման և արդյունավետության բարձրացման գործընթացին զուգահեռ անհրաժեշտ է աշխատավարձի ֆոնդից կատարվող վճարումների նկատմամբ պարբերաբար իրականացնել հսկողություն:

Համաձայն 2013 թվականին իրականացված ՊԾՖՀ-PEFA գնահատման «ԿՑ-18. Աշխատավարձի ֆոնդի վերահսկման արդյունավետությունը» կատարողական ցուցանիշի գնահատման՝ ՀՀ պետական որոշ մարմիններում անձնակազմի կառավարման ստորաբաժանումներում (ԱԿՍ) վարվող անձնակազմի գրանցումների փոփոխությունները տրամադրվում են Հաշվապահական հաշվառման ստորաբաժանմանը միայն անձնակազմի փոփոխությունների մասին փաստաթղթերի (օր՝ աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման, պաշտոնի բարձրացման, տարեկան արձակուրդների և այլնի մասին գերատեսչության ղեկավարի/գլխավոր քարտուղարի հրամաններ) օրինակների տեսքով, որոնց հիման վրա փոփոխություններ են արվում աշխատողների անձնական գործերում: Վերոնշյալ փաստաթղթերի օրինակները տեղադրվում են պետական մարմնի ներքին համակարգչային ցանցի հատուկ դաշտերում՝ հնարավորություն տալով Հաշվապահական հաշվառման ստորաբաժանմանը ստուգել և ներբեռնել դրանք, և այնուհետև ձեռքով կատարել համապատասխան փոփոխություններ

⁸ http://www.minfin.am/hy/page/petakan_tsakhseri_ev_finansakan_hashvetvoghakanutyany_ptsfh_gnahatum/

⁹ http://www.minfin.am/hy/page/petakan_byuje_2019_t

«Հայկական ծրագրեր» համակարգում (ՀԾ): Նման մոտեցման կիրառման պարագայում մեծանում է մարդկային գործոնի նշանակությունը՝ դրանով իսկ առաջացնելով ՀԾ-ում փոփոխությունների ամբողջականության և ժամանակին կատարմանը սպառնացող հնարավոր ռիսկեր: Որպես կանոն, տարվա ընթացքում չեն կատարվում ԱԿՍ-ներում վարվող անձնական գրանցումների և Հաշվապահական հաշվառման ստորաբաժանումներում վարվող աշխատավարձի համապարփակ և կանոնավոր համադրումներ: Ստուգումներն իրականացվում են պատահական ընտրանքի մեթոդով սխալների հայտնաբերման միջոցով կամ աշխատողների կողմից բարձրացված խնդիրների կամ գանգատների քննության արդյունքում: Ինչևէ, նման աշխատանքները պատշաճ կանոնակարգված չեն ու չեն հանդիսանում համապարփակ համադրում: Կարելի է ասել, որ իրականում գոյություն չունեն համակողմանի պարբերական համադրումներ կատարելու էական խոչընդոտներ, սակայն գործնականում ԱԿՍ-ներում վարվող անձնակազմի գրանցումների և հաշվապահական հաշվառման ստորաբաժանումներում վարվող աշխատավարձերի տվյալների միջև ուղղակի էլեկտրոնային կապի բացակայության պայմաններում համադրումները կարող են լինել ժամանակատար:¹⁰

Արդյունավետ ներքին հսկողությունը պետք է սահմանափակի անձնակազմի ու աշխատավարձի տվյալների փոփոխությունների կատարման հնարավորությունը: Անձնակազմի տվյալների շտեմարանում իրականացվող ցանկացած փոփոխություն պետք է իրականացվի ժամանակին և արձանագրվի, ինչպես նաև գտնվի ներքին աուդիտի հսկողության ուշադրության կենտրոնում՝ բացառելու համար «ուրվական» աշխատողների առկայությունը: Այսինքն պարբերաբար պետք է իրականացվի աշխատավարձային աուդիտներ՝ «ուրվականների» հայտնաբերման, տվյալների բացերը լրացնելու և հսկողության թույլ կողմերը բացահայտելու համար:

Այս ուղղությամբ որոշակի ձեռքներումներ են արձանագրվել օրինակ ՖՆ-ում: Մասնավորապես վերջին տարիներին իրականացվել են ՀԾ-ի արդիականացման և ԱԿՍ-ի կողմից կիրառվող անձնակազմի տվյալների կառավարման մոդուլների հետ նշված համակարգի կապի ապահովման աշխատանքներ, որոնց արդյունքում ապահովվել է անմիջական ծրագրային կապ անձնակազմի գրանցումների և վճարացուցակների միջև: Մասնավորապես 2014 թվականից սկսած ՖՆ աշխատողների աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման, պաշտոնի բարձրացման վերաբերյալ տվյալները ՖՆ անձնակազմի կառավարման վարչությունը փոխանցում է Հաշվապահական հաշվառման ստորաբաժանմանը՝ ներբեռնելով տվյալները ՀԾ համակարգ, իսկ 2018 թվականի հունվար ամսից տարեկան արձակուրդների, գործուղումների, անաշխատունակության թերթիկների, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդների վերաբերյալ տվյալները նույնպես մուտքագրվում և փոխանցվում են հաշվապահությանը ՀԾ համակարգով: Սակայն չի ներդրվել աշխատողներին իրենց ստացած աշխատավարձի և դրան հավասարեցվող վճարումների հաշվարկման և ծանուցման համակարգ, որի միջոցով պետական մարմինների աշխատակիցները կստանան ծանուցումներ իրենց փոխանցված աշխատավարձերի և դրանց հաշվարկների վերաբերյալ:

Նպատակը

- *աշխատավարձի ֆոնդի նկատմամբ հսկողության արդյունավետության ապահովում*

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

- 29) անձնակազմի գրանցումների և աշխատավարձի ֆոնդի տվյալները համադրվում են հաշվապահական հաշվառման տեղեկատվական համակարգի միջոցով
- 30) անձնակազմի տվյալների շտեմարանում իրականացվող ցանկացած փոփոխություն իրականացվում է ժամանակին հաշվապահական հաշվառման տեղեկատվական համակարգի միջոցով

¹⁰ <https://www.pefa.org/sites/default/files/assessments/comments/AM-May14-PFMPR-Public.pdf>

- 31) գործում են անձնակազմի գրանցումների և աշխատավարձի ֆոնդի փոփոխությունների նկատմամբ հսկողության մեխանիզմներ
- 32) առնվազն երեք տարին մեկ անգամ իրականացվում են աշխատավարձի աուդիտներ

Թիրախ 25. Անձնակազմի գրանցումների և աշխատավարձի ֆոնդի տվյալների համադրում և փոփոխությունների իրականացում հաշվապահական հաշվառման տեղեկատվական համակարգի միջոցով

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Մարդկային ռեսուրսների բազայի/տվյալները հաշվապահական հաշվառման էլեկտրոնային ծրագրի մոդուլների հետ ինտեգրման համակարգի մշակում	- Բոլոր պետական մարմիններում, որտեղ մարդկային ռեսուրսների տվյալների փոխանցումը չեն իրականացվում հաշվապահական հաշվառման տեղեկատվական ծրագրի միջոցով, անձնակազմի տվյալները հաշվապահությանը փոխանցելու վերաբերյալ առկա վիճակի գույքագրում - Յուրաքանչյուր պետական մարմնում ծրագրի իրականացման պլանի մշակում, մանրամասն տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում - Համակարգի նախագծում և մշակում	Մարդկային ռեսուրսների բազայի տվյալները հաշվապահական հաշվառման տեղեկատվական ծրագրի մոդուլների հետ ինտեգրման համակարգի տեխնիկական առաջադրանքը մշակված և հաստատված է
2. Համակարգի ներդրում և սպասարկում	- Հաստատված տեխնիկական առաջադրանքի հիման վրա բյուջետավորում - Ուսուցումների իրականացում - Համակարգի ներդրում - Համակարգի շարունակական սպասարկում	Համակարգը ներդրված է և անձնակազմի գրանցումների և աշխատավարձի ֆոնդի տվյալների հետ կապված բոլոր գործընթացները իրականացվում են համակարգի միջոցով

Թիրախ 26. Աշխատավարձի աուդիտի իրականացում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Ներքին աուդիտի կողմից աշխատավարձի աուդիտի իրականացում	- Բոլոր պետական կառավարման մարմինների ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից կիրականացվեն անձնակազմի կառավարման կողմից հաշվապահական հաշվառման ստորաբաժանումներին տվյալների փոխանցման առկա վիճակի վերաբերյալ ուսումնասիրություններ - Տվյալների փոխանցման, համադրման բացերի և հսկողության թույլ կողմերի բացահայտում	- Տվյալների փոխանցման և համադրման թերությունները բացահայտված են - Հաշվետվություններում ներկայացված են առաջարկություններ աշխատավարձերի հսկողության իրականացման վերաբերյալ

	Առաջարկությունների, հաշվետվությունների ներկայացում	
--	--	--

Թիրախ 27. Աշխատավարձի և դրան հավասարեցվող վճարումների հաշվարկման հաշվետվողականության ապահովում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Աշխատողներին իրենց ստացած աշխատավարձի և դրան հավասարեցվող վճարումների հաշվարկման և ստացված եկամուտների վերաբերյալ տվյալների ծանուցում	Գործող հաշվապահական հաշվառման ծրագրի միջոցով յուրաքանչյուր ամիս նախորդ ամսվա ընթացքում ստացած եկամուտների հաշվարկման և վճարման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում աշխատողներին՝ էլ-փոստի միջոցով	Աշխատողները յուրաքանչյուր ամիս ստանում են տեղեկատվություն նախորդ ամսվա ընթացքում ստացած եկամուտների հաշվարկման և վճարման վերաբերյալ

10. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

Բաղադրիչ 11. Պետական պարտքի կառավարում

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2008թ., և այս տարիների ընթացքում օրենքի կիրառմանը զուգահեռ ի հայտ են եկել որոշ անհամապատասխանություններ միջազգային պրակտիկայում կիրառվող նմանատիպ օրենքներում և միջազգային ֆինանսական կառույցների կողմից ընդունված փաստաթղթերում կիրառվող սահմանումների միջև: Մասնավորապես, ՍԻԳՄԱ-ի Ձեկույցում նշվում է, որ անհրաժեշտ է վերանայել «Պետական պարտքի մասին» օրենքի սահմանումները՝ դրանք համապատասխանացնելով «Ազգային հաշիվների համակարգ» 2008-ի սահմանումներին: Մասնավորապես, անհրաժեշտություն է առաջացել «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքում հստակեցնել «պետական պարտք» և «կառավարության պարտք» հասկացությունները և հնարավորինս մոտարկել դրանք միջազգային պրակտիկայում կիրառվող սահմանումներին:

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի և ռիսկերի վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ պարտքի պորտֆելն ամենաշատը ենթակա է փոխարժեքի ռիսկի ազդեցությանը: Այդ իսկ պատճառով, առաջնային է համարվում պետական գանձապետական պարտատոմսերի շուկայի շարունակական զարգացումը և ներքին շուկայից փոխառությունների ներգրավման ծավալի աճը:

Նպատակները

- մինչև 2022թ. ավարտը «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքը համապատասխանեցնել միջազգային ֆինանսական կառույցների կողմից կիրառվող չափանիշներին

- մեղմել ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի փոխարժեքի ռիսկը՝ մինչև 2023թ. ավարտը պետական բյուջեում ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման կշիռը հասցնելով առնվազն 50.0%

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

- 33) պետական պարտքի մասին վերանայված օրենք, որը կապահովի ՀՀ պետական պարտքին վերաբերող տվյալների համադրելիությունը միջազգայնորեն ընդունված չափանիշներին
- 34) պետական բյուջեում ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման կշիռը կազմում է առնվազն 50.0% և մեղմում է ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի փոխարժեքի ռիսկը

Թիրախ 28. «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի բարելավում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1.«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի համապատասխանեցում միջազգային ֆինանսական կառույցների կողմից կիրառվող չափանիշներին	• «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • Նախագծի ներկայացում ՀՀ Ազգային ժողով	«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքում կիրառվող սահմանումների («պետական պարտք» և «կառավարության պարտք») հստակեցման միջոցով պարտքի վիճակագրության բարելավում

Թիրախ 29. ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի փոխարժեքի ռիսկի մեղմում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1.Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեում ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման կշռի ավելացում	Պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումների ծավալի ավելացում	Պետական բյուջեում ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման կշիռը կազմում է առնվազն 50.0%

11. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Բաղադրիչ 12. Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման արդյունավետությունը

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

ՀՀ կառավարության որոշումով հաստատված հանրային հատվածի կազմակերպությունների կողմից հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման ժամանակացույցին համապատասխան՝ 2016-2018թթ. ընթացքում թվով 63 պետական մարմիններ, քաղաքային և գյուղական համայնքներ և նրանց ենթակա ՊՈԱԿ-ներ և ՀՈԱԿ-ներ անցում են կատարել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգին¹¹ (Նոր համակարգ): Ուսումնասիրվել են 2016-2017թթ. Նոր համակարգին անցում կատարած կազմակերպություններում վերջինիս ներդրման հետևանքով առաջ եկած խնդիրները, որոնց լուծման ուղղությամբ հանրային հատվածի կազմակերպություններին տրամադրվել են «Մասնագիտական տեղեկատու» պարբերականի թվով 7 համարներ: Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել մշտադիտարկման ենթարկել հանրային հատվածի բոլոր կազմակերպությունների տարեկան հաշվետվությունները՝ վերջիններիս որակը բարելավելու նպատակով: Կազմակերպություններում նոր համակարգի ամբողջական ներդրումից հետո իրականացվելու է նախարարությունների մակարդակով համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստում: Այդ նպատակով անհրաժեշտություն է առաջանում իրականացնել ֆինանսական հաշվետվություններ պատրաստող մասնագետների ուսուցում և վերապատրաստում, ինչպես նաև մշակել կամ ձեռք բերել համապատասխան միասնական հաշվապահական ծրագիր, մշակել մեթոդաբանություն, որոնց օգնությամբ հնարավոր կլինի իրականացնել նախարարությունների մակարդակով միջանկյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստում:

«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն ՀՀ կառավարության սահմանած կազմակերպություններում գլխավոր հաշվապահ կարող է աշխատել ՀՀ օրենսդրության համաձայն հանրային հատվածի հաշվապահի որակավորում ունեցող անձը: Նույն հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ հանրային հատվածի հաշվապահի որակավորումը լիազոր մարմնի (ՖՆ) սահմանած պահանջները բավարարող՝ հաշվապահի որակավորում ստանալու համար ՖՆ դիմած ֆիզիկական անձի մասնագիտական գիտելիքների ստուգման ընթացակարգ է, որի արդյունքների հիման վրա տրվում է հաշվապահի որակավորման վկայական: Հաշվապահի որակավորումն իրականացվում է քննությունների միջոցով՝ ՖՆ-ի սահմանած կարգով: Քննությունները կազմակերպում և անցկացնում է ՖՆ-ն՝ իր հաստատած որակավորման քննությունների ծրագրի շրջանակներում: Վկայականը տրվում է լիազոր մարմնի սահմանած ժամկետով, որը չի կարող պակաս լինել 5 տարուց: Նշյալով պայմանավորված՝ անհրաժեշտ է սահմանել հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահների որակավորման իրականացման ընթացակարգեր:

Նպատակները.

- *հանրային հատվածի կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների որակի բարելավում*
- *նախարարությունների մակարդակով միջանկյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստում*

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

- 35) տարեկան ֆինանսական հաշվետվությունները համապարփակ են և ներկայացվում են սահմանված ժամկետներում
- 36) նախարարությունների մակարդակով միջանկյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստում են սահմանված մեթոդաբանությամբ համապատասխան
- 37) հանրային հատվածի կազմակերպություններում աշխատում են որակավորում ստացած գլխավոր հաշվապահներ

¹¹ ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ. հուլիսի 23-ի թիվ 463-Ն հրաման

Թիրախ 30. Հանրային հատվածի կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների մշտադիտարկում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացման ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. ՖՆ-ի կողմից հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների մշտադիտարկման իրականացում	- Այցելություններ հանրային հատվածի կազմակերպություններ - Հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների մշտադիտարկման աշխատանքների իրականացում - Մեթոդական օժանդակության տրամադրում	ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտին (ՀՀՀՀՍ) համապատասխանող ֆինանսական հաշվետվություններ
2. Մեթոդաբանության վերանայում (ըստ անհրաժեշտության)	Մշտադիտարկման արդյունքում հայտնաբերված խնդիրների հիման վրա իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունների իրականացում (ըստ անհրաժեշտության)	Բարելավված կանոնակարգող դաշտ
3. Հանրային հատվածի կազմակերպությունների գլխավոր հաշվապահների որակավորման գործընթացի իրականացում	- Հանրային հատվածի կազմակերպությունների գլխավոր հաշվապահների որակավորման անցկացման ընթացակարգերի սահմանում. - Որակավորումների իրականացում և վկայականների շնորհում	Որակավորում ստացած հանրային հատվածի կազմակերպությունների գլխավոր հաշվապահներ

Թիրախ 31. Նախարարությունների մակարդակով միջանկյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացման ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Ֆինանսական հաշվետվությունների համախմբման մեթոդաբանության մշակում	- Իրավական ակտերի, ձեռնարկների և ուղեցույցների մշակում - Նախագծերի ներկայացում կարծիքի, - Վերջնական նախագծերի հաստատում	Համախմբման մեթոդաբանությունը առկա է
2. Համախմբման իրականացման նպատակով միասնական համակարգչային ծրագրի մշակում կամ ձեռքբերում	- Ֆինանսական հաշվետվությունների համախմբման միասնական համակարգչային ծրագրի տեխնիկական առաջադրանքի մշակում - Ծրագրի ձեռքբերում	Համախմբման համար անհրաժեշտ համակարգչային ծրագիր
3. Նախարարությունների մակարդակով միջանկյալ համախմբված ֆինանսական	Համախմբման իրականացման նպատակով միասնական համակարգչային ծրագրի փորձարկում	Նախարարությունների մակարդակով ներկայացվում են միջանկյալ համախմբված ֆինանսական հաշվետվություններ

հաշվետվությունների պատրաստում	• Հանրային հատվածի համապատասխան մասնագետների վերապատրաստում • Համակարգի շահագործման ընթացքում խնդիրների բացահայտում, դրանց լուծման ուղղությամբ առաջարկների ներկայացում	
-------------------------------	---	--

12. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ԱՌԻԴԻՏ

Բաղադրիչ 13. Կորպորատիվ հաշվապահական հաշվառման և աուդիտի գործունեության կարգավորում

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

Ներկայումս ՀՀ-ում հաշվապահական հաշվառման ոլորտի կարգավորումն իրականացվում է պետության կողմից՝ պետական կառավարման լիազոր մարմնի (ՖՆ) միջոցով, ինչը նշանակում է, որ հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներում պետությունն է մշակում կարգավորման քաղաքականությունը, ինչպես նաև այդ քաղաքականության իրականացման մեխանիզմները: ՖՆ-ի կողմից մշակվել են «Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին», «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքների նախագծերը: Օրենքների նախագծերի փաթեթով նախատեսվում է ՀՀ-ում ներդնել հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտների կարգավորման ու դրանց նկատմամբ վերահսկողության նոր՝ մասնագիտացված կառույցներ-հանրային վերահսկողության խորհուրդ մոդելը: Նախագծերով նախատեսվում է նաև ճշգրտել պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների շրջանակը, ներկայումս գործող օրենսդրական ձևական պահանջից անցում կատարելով իրապես աուդիտի ենթարկվելու հանրային պահանջ ունեցող ընկերություններ ներգրավելուն:

«Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի համաձայն Հանրային վերահսկողության խորհուրդը հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման նկատմամբ հանրային վերահսկողության գործառույթներ իրականացնելու նպատակով ստեղծվող, ՖՆ-ին կից մարմին է: Նախատեսվում է, որ հանրային վերահսկողության խորհուրդը կազմված է լինելու յոթ անդամից՝ նախագահ, նախագահի տեղակալ և հինգ անդամ, որոնց նշանակելու է ՀՀ ֆինանսների նախարարը: Հանրային վերահսկողության խորհուրդը գործելու է հասարակական հիմունքներով:

«Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծով նախատեսվում է, որ աուդիտորական կազմակերպությունը ձեռք է բերում աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք այն ամսաթվից, երբ նրա մասին տեղեկությունները գրանցվում են մասնագիտացված կառույցի՝ աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և որակավորված հաշվապահների ռեեստրում: «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի համաձայն ռեեստրը մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող աուդիտորների, որակավորված հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունների համակարգված ցուցակ է, որը վարվում է էլեկտրոնային եղանակով: Ռեեստրի վարման կարգը և ռեեստրում ներառվող տվյալների ցանկը սահմանում է Հանրային վերահսկողության խորհուրդը:

Հիշյալ օրենքների նախագծերի փաթեթը¹² ներկայացվել է ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը: Նախագծերի ընդունմամբ ակնկալվում է հետևյալ հիմնական արդյունքների ստացումը.

1) հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտների զարգացման համար անհրաժեշտ որոշ գործառույթներ, մասնավորապես՝ մասնագետների որակավորման և շարունակական մասնագիտական զարգացման, ՖՀՄՍ-ների և Աուդիտի միջազգային ստանդարտների ժամանակին թարգմանության, աուդիտի որակի ապահովման համար անհրաժեշտ գործողությունների իրականացումը մասնագիտացված կառույցների միջոցով.

2) ՀՀ ֆինանսների նախարարությանը կից ստեղծել Հանրային վերահսկողության խորհուրդ, որը պատասխանատու կլինի հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնելու համար.

3) ճշգրտել տարեկան աուդիտի պարտադիր պահանջ ունեցող կազմակերպությունների շրջանակը՝ փոփոխված չափանիշներով խոշոր համարվող կազմակերպությունների համար, որոնց սահմանումը կհամապատասխանեցվի ԵՄ-ի դիրեկտիվներով ներկայացված չափանիշներին,

4) վերանայել աուդիտորական կազմակերպությունների լիցենզավորման գործընթացը՝ հաշվառման նոր համակարգի ներդրման միջոցով (Աուդիտորական կազմակերպությունների ռեեստր):

Նպատակը

- հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտների կարգավորման ու դրանց նկատմամբ վերահսկողության նոր մոդելի ներդրում

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշը

38) հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության նկատմամբ ներդրված հանրային վերահսկողության համակարգի առկայություն:

Թիրախ 32. Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության նկատմամբ հանրային վերահսկողության համակարգի ներդրում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Անհրաժեշտ ենթաօրենսդրական դաշտի ամբողջականացում	• Հանրային վերահսկողության խորհրդի աշխատակարգի մշակում • Որակի վերահսկողության մեթոդաբանության մշակում • Նոր օրենսդրությամբ նախատեսված իրավական ակտերի մշակում	• Ոլորտների կարգավորման ու դրանց նկատմամբ վերահսկողության նոր՝ մասնագիտացված կառույցներ-հանրային վերահսկողության խորհուրդ մոդել

¹² Հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից՝ 2018թ. սեպտեմբերի 14-ի թիվ 1009-Ա որոշմամբ

		• աուդիտի դրանց նկատմամբ վերահսկողության նոր՝ մաս • պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների ճշգրտված շրջանակ
2. Աշխատակիցների վերապատրաստում	• Նոր օրենսդրության համապատասխան աշխատակիցների վերապատրաստման պլան-ժամանակացույցի պատրաստում • Վերապատրաստումների իրականացում	• Կարողությունների համապատասխան մակարդակ

13. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՊՈԱԿ)

Բաղադրիչ 14. Պետական կազմակերպությունների ֆինանսական կառավարում և հսկողություն՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունների (ՊՈԱԿ) հաշվետվողականությունը

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

ՊՈԱԿ-ները, որպես պետական հատվածի միավորների մեծաքանակ խումբ, ելնելով իրենց չափերից, ռիսկայնության մակարդակից և կառավարման առանձնահատկություններից, ընդգրկվում են գործունեության բազմաթիվ ոլորտներում (նրանց մեծ մասը հիմնականում գործում են կրթական, մշակութային, առողջապահական և սոցիալական ոլորտներում): Ներկայումս ՊՈԱԿ-ներն իրենց լիազոր մարմիններին ներկայացնում են ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ տարաժամկետ հաշվետվություններ, որոնք այնուհետև հաշվետվողականության և մշտադիտարկման նպատակով ներկայացվում են ՀՀ ՖՆ: Թեպետ այդ հաշվետվությունները բավականին ծավալուն են, սակայն դրանցում ներկայացվող տեղեկատվությունը ներկայիս տեսքով բավարար չէ այդ հաշվետվությունների հիման վրա կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետ մշտադիտարկում իրականացնելու համար: Այդ առումով, անհրաժեշտություն է առաջացել տարբեր ոլորտների ՊՈԱԿ-ների համար սահմանել ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների համակարգ, ինչը հնարավորություն կընձեռի գնահատելու, թե ինչ արդյունավետությամբ են իրականացվում ՊՈԱԿ-ների կողմից մատուցվող ծառայությունները ոչ միայն զուտ ֆինանսական, այլև մատուցվող ծառայությունների ոչ ֆինանսական արդյունքների և նախատեսված նպատակներին հասնելու տեսանկյունից:

Նպատակը

- ՊՈԱԿ-ների ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվողականության և մոնիթորինգի համակարգի բարելավում

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

39) ՊՈԱԿ-ների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ արդյունավետ հաշվետվողականության և մշտադիտարկման իրականացում

Թիրախ 33. ՊՈԱԿ-ների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ հաշվետվողականության և մշտադիտարկման համակարգի կատարելագործում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. ՊՈԱԿ-ների գործունեության մշտադիտարկման նպատակով ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների համակարգի մշակում	- ՊՈԱԿ-ների ֆինանսատնտեսական գործունեության մշտադիտարկման մեթոդաբանության կատարելագործում - Մշտադիտարկման նպատակով ՊՈԱԿ-ների ոչ ֆինանսական ցուցանիշների համակարգի մշակում - Համապատասխան իրավական ակտերի նախագծում և ընդունում	ՊՈԱԿ-ների ֆինանսատնտեսական գործունեության մշտադիտարկման արդիական համակարգի առկայություն

14. ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐ

Բաղադրիչ 15. Էլեկտրոնային գնումների համակարգի արդիականացում

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

ՀՀ-ում էլեկտրոնային գնումների համակարգը ժամանակակից արդի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով Համաշխարհային Բանկի գնահատմամբ էլեկտրոնային գնումների համակարգը տեխնիկապես և ֆունկցիոնալ առումով չի համապատասխանում ինչպես ժամանակակից, այնպես էլ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ֆունկցիոնալ պահանջներին: Գործող ծրագրային ապահովումը հնարավորություն չի տալիս ընդլայնել նաև համակարգն օգտագործող պատվիրատուների շրջանակը, ինչպես նաև ռիսկային գործարքների վերհանման համար ավտոմատ եղանակով ապահովել վերլուծությունների իրականացումը:

Էլեկտրոնային գնումների նոր համակարգի ներդրմամբ նախատեսվում է ընդլայնել համակարգը շահագործող պատվիրատուների ցանկը, որը հնարավորություն կտա համակարգի միջոցով իրենց կարիքների համար գնումներ իրականացնել նաև այն պատվիրատուներին, որոնք սահմանված են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով, սակայն ներառված չեն վերոնշյալ ցանկում:

Նպատակը

- *Էլեկտրոնային գնումների համակարգի կադրաբեղադրում*

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

40) Էլեկտրոնային գնումների համակարգը լիարժեք համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ֆունկցիոնալ, իսկ տեխնիկական և անվտանգության առումով ժամանակակից պահանջներին: Ընդլայնվել է համակարգը շահագործող պատվիրատուների շրջանակը, ռիսկային գործարքների վերհանման համար վերլուծություններն իրականացվում են ավտոմատ եղանակով:

Թիրախ 34. Էլեկտրոնային գնումների համակարգի նոր ծրագրային ապահովում

Միջոցառում	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Էլեկտրոնային գնումների համակարգի նոր ծրագրային ապահովման մշակում և ներդրում	• ՀՀ պետական բյուջեի կամ միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրված ֆինանսական միջոցների հաշվին նոր ծրագրային ապահովման ձեռք բերում • Ծրագրի ներդրում, փորձարկում և շահագործում • Համակարգն օգտագործող շահառուների համար վերապատրաստման ծրագրերի կազմակերպում	Գործող էլեկտրոնային գնումների նոր ծրագրային ապահովում

Բաղադրիչ 16. Գնումների պլանավորում

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

Ներկայումս պետության միջոցների հաշվին իրականացվող գնումների շրջանակում միևնույն գնման առարկայի ձեռքբերման համար պլանավորվում են տարբեր նախահաշվային գներ, որի արդյունքում ի հայտ են գալիս տվյալ առարկաների՝ շուկայում գործող գներից էական շեղումներ:

Գնումների պլանավորման գործընթացը մասնակի է նորմավորված և իրավական առումով կարգավորված: Դրա արդյունքում տարբեր մարմինների միանման կարիքները բավարարվում են տարբեր բնութագրեր ունեցող առարկաներով, ինչը հնարավորություն չի ընձեռում ապահովելու պլանավորման միասնական համակարգ:

Նպատակները

- *գնումների պլանավորման համակարգի կադրաբեղադրում*

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

- 41) Ներդրված նախահաշվային գների որոշման և պլանավորման միասնական համակարգ:
Դրա արդյունքում տարբեր մարմինների գնումներն իրականացվում են հնարավորինս նորմավորված և միասնականացված:

Թիրախ 35. Գնումների պլանավորման համակարգի կատարելագործում

Միջոցառում	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Մշակել ավտոմատ եղանակով, միանման բնութագրեր ունեցող առարկաների նախահաշվային գների որոշման և պլանավորման միասնական համակարգի ներդրման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծ	Պատվիրատուների միանման կարիքների բավարարումը միևնույն բնութագրերով և նախահաշվային գներով իրականացնելու համար իրավական հիմքերի սահմանում	Պատվիրատուների միանման կարիքները բավարարվում են միևնույն բնութագրեր ունեցող առարկաներով և նույն նախահաշվային գներով

Բաղադրիչ 17. Գնումների բողոքարկման համակարգ

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

Գնումների արտադատական բողոքարկման համակարգը արդյունավետ չէ, նկատի ունենալով, որ բողոքներ քննող անձանց գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ կայացվող որոշումները գնումների մասին ՀՀ օրենսդրության տեսանկյունից խնդրահարույց են, կայացվում են միմյանց հակասող որոշումներ, որոնց հետևանքով գնման ընթացակարգերը հայտարարվում են չկայացած, ինչը դրանք կազմակերպելու և անցկացնելու տեսակետից հանգեցնում է դժգոհությունների և ֆինանսական կորուստների: Նախատեսվող փոփոխությունների արդյունքում գնումների արտադատական բողոքարկման համակարգը այլևս չի գործի, իսկ գնումների հետ կապված բողոքները կքննվեն դատարանների կողմից՝ նման դեպքերի համար սահմանելով հատուկ վարույթով որոշումների կայացման ընթացակարգ:

Նպատակը

- ձևավորել գնումների բողոքարկման արդյունավետ և գործունակ համակարգ

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները
 42) գործում է գնումների բողոքարկման արդյունավետ և գործունակ համակարգ

Թիրախ 36. Գնումների բողոքարկման համակարգի կատարելագործում

Միջոցառում	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1.«Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների կատարում	Գնումների հետ կապված բողոքները քննվում են դատարանների կողմից՝ նման դեպքերի համար սահմանելով հատուկ վարույթով որոշումների կայացման ընթացակարգ	Գործունակ և անկախ բողոքարկման համակարգ

15. ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Բաղադրիչ 18. Ֆինանսական կառավարում և հսկողություն (ՖԿՀ)

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

ՖԿՀ համակարգի ներդրումը բարեփոխումների ամեաբարդ հատվածներից մեկն է եղել: Դեռևս ՊՖԿՀԲ առաջին ռազմավարությամբ նախատեսվում էր, որ 2014թ. վերջում Հայաստանը կունենա գործուն համակարգ: Պետական ներքին ֆինանսական հսկողության համակարգի գործունեությունը կարգավորվում է մի շարք օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով¹³ սահմանելով կառավարման կազմակերպական կառուցվածքները, կառավարչական հաշվետվողականության մեխանիզմները և այլն: Այդ օրենսդրական ակտերն ընդունվել են ժամանակի ընթացքում՝ ՊՖԿ առանձին տարրերի զարգացմանը զուգընթաց և կենտրոնանում են ֆինանսական կառավարման և հսկողության առանձին հարցերի վրա՝ երբեմն առանց հաշվի առնելու ՖԿՀ համակարգի ընդհանուր արդյունավետության և օգտավետության հարցերը: Այդ առումով չկա պետական ֆինանսական կառավարմանն ու հսկողությանն առնչվող բոլոր խնդիրները համատեղող մեկ ընդհանուր օրենսդրություն:

Մյուս կողմից վերջին տարիներին ՊՖԿ ոլորտում իրականացվող որոշ բարեփոխումներ (օրինակ՝ Ծրագրային բյուջետավորման բարեփոխումները) լուրջ մարտահրավերներ են ստեղծում ՖԿՀ համակարգի նպատակների, բաղադրիչների և գործառույթների առումով:

Նպատակը

- ֆինանսական կառավարման և հսկողության համակարգի ներդրում

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

43) ՖԿՀ համակարգը ներդրված է բոլոր պետական մարմիններում

44) կառավարչական հաշվետվողականության սկզբունքը ներդրված է բոլոր պետական մարմիններում

¹³ Բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենք, Գանձապետական համակարգի մասին ՀՀ օրենք, Ներքին առօրինի մասին ՀՀ օրենք, Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենք, Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենք և այլն

Թիրախ 37. Ֆինանսական կառավարման և հսկողության համակարգի ներդրման ապահովում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. ՖԿՀ համակարգի մեթոդաբանության փորձարկում	ՀՀ հանրային հատվածի առնվազն երկու կազմակերպություններում ՖԿՀ համակարգի մշակված մեթոդաբանության փորձարկում	ՖԿՀ համակարգի փորձարկված մեթոդաբանություն
2. ՖԿՀ հայեցակարգի և ՖԿՀ օրենսդրական ակտերի ընդունում	- Փորձարկված մեթոդաբանության հիման վրա ՖԿՀ հայեցակարգի և օրենսդրական ակտերի մշակում - ՖԿՀ հայեցակարգի և ՖԿՀ օրենսդրական ակտերի հաստատում	ՖԿՀ ընդունված հայեցակարգ և օրենսդրություն
3. Հանրային հատվածի կազմակերպություններում ՖԿՀ համակարգի ներդրում	- ՖԿՀ համակարգի ներդրման միջոցառումների ծրագրի մշակում և հաստատում - ՖԿՀ համակարգի ներդրում միջոցառումների ծրագրին համապատասխան, այդ թվում կիրականացվի նաև ՖԿՀ համակարգում ընդդրված մասնագետների վերապատրաստումներ	ՖԿՀ համակարգի ներդրման գործընթացը իրականացվում է սահմանված ժամանակացույցին համապատասխան

Բաղադրիչ 19. Հանրային հատվածի ներքին աուդիտ

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի ոլորտում 2009-2015թթ. իրականացված ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտի (այսուհետ՝ ՆԱ) համակարգի ձևավորման և ներդրման աշխատանքներին հաջորդել են ՆԱ գործառույթի ապահովմանն ուղղված աշխատանքներ:

ՆԱ մասնագիտական գործունեության 1300 ստանդարտի համաձայն՝ ՀՀ հանրային հատվածի յուրաքանչյուր կազմակերպության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պետք է մշակի և կիրառի ՆԱ որակի երաշխավորման ու բարելավման ծրագիր, որը պետք է ենթարկվի ներքին և արտաքին գնահատման: Արտաքին գնահատումը պետք է իրականացվի առնվազն յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ ՖՆ-ի կողմից: 2018թ. ՀԲ աջակցությամբ մշակվել է ՆԱ որակի արտաքին գնահատման ձեռնարկ, որն այնուհետև փորձարկվել է ՀՀ կրթության և գիտության նախարարությունում ու ՀՀ ՖՆ-ում: ՀՀ հանրային հատվածի մնացած 52 պետական կառավարման մարմինների և 48 համայնքապետարանների ՆԱ որակը 2019թ. 1-ին կիսամյակի դրությամբ չի ենթարկվել արտաքին գնահատման:

Չնայած ոլորտում մինչ օրս իրականացված նշանակալի բարեփոխումներին, այդուհանդերձ, համակարգը դեռևս լիարժեք կերպով չի գործում՝ քանզի գործնականում բավարար ուշադրություն չի դարձվում ֆինանսական կառավարման և հսկողության հետ կապված գործառնությունների արդյունավետության գնահատմանը՝ ՖԿՀ համակարգի ներդրման խնդիրներով և ներքին աուդիտորների սահմանափակ կարողություններով պայմանավորված: Որպես հետևանք, ներքին աուդիտը գործնականում հավաստիացումներ է տրամադրում հիմնականում համակարգի գնահատման և համապատասխանության աուդիտի արդյունքների հիման վրա՝ հետին պլան մղելով կատարողականի աուդիտը: Դա առաջ է բերում ներքին աուդիտի ոլորտի օրենսդրության բարելավման և ներքին աուդիտորների կարողությունների զարգացման անհրաժեշտություն՝ չբացառելով ներքին աուդիտի առկա մոդելի վերանայման հնարավորությունը:

Նպատակը

- ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի գործառնության արդյունավետության բարձրացում

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

- 45) ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտի որակի արտաքին գնահատման իրականացում
- 46) ներքին աուդիտի և արտաքին աուդիտի համագործակցության ապահովում
- 47) ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի տարեկան ծրագրերի 30%-ը կազմում է կատարողականի աուդիտը
- 48) ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորների մասնագիտական գիտելիքների և կարողությունների զարգացման ապահովում

Թիրախ 38. Ներքին աուդիտի որակի արտաքին գնահատման իրականացում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Ներքին աուդիտի որակի արտաքին գնահատման մեթոդաբանության հաստատում	Ներքին աուդիտի որակի արտաքին գնահատման իրականացման փորձարկված մեթոդաբանության հաստատում	• «Ներքին աուդիտի որակի արտաքին գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հաստատված հրաման
2. Ներքին աուդիտի որակի արտաքին գնահատման իրականացում	Հաստատված մեթոդաբանության համապատասխան՝ • ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ռիսկերի գնահատում • Արտաքին գնահատման իրականացման տարեկան ծրագրի կազմում	• Հանրային հատվածի բոլոր այն կազմակերպությունները, որտեղ ներդրված է ներքին աուդիտի համակարգ, ենթարկվել են արտաքին գնահատման ՖՆ-ի կողմից: • Հաշվետվություն՝ ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի որակի մասին

	Արտաքին գնահատման իրականացում	
--	---	--

Թիրախ 39. Ներքին աուդիտի և արտաքին աուդիտի համագործակցության ապահովում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Ներքին աուդիտի և արտաքին աուդիտի համագործակցության ընթացակարգերի սահմանում	ՖՆ-ի և ՀՊ-ի համաձայնությամբ և մասնակցությամբ համատեղ աշխատանքների իրականացում՝ ներքին աուդիտի և արտաքին աուդիտի համագործակցության կարգի մշակման և հաստատմանն ուղղությամբ:	«Ներքին և արտաքին աուդիտի համագործակցության կարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահի համատեղ օրենսդրական ակտի հաստատում

Թիրախ 40. Կատարողականի աուդիտի կարևորության շեշտադրում և գործնական կիրառման ապահովում տարեկան ծրագրի 30%-ի չափով

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Կատարողականի աուդիտի իրականացման մեթոդաբանության հաստատում	Կատարողականի աուդիտի ձեռնարկի/ուղեցույցի լրամշակում, ներկայացում շահագրգիռ մարմիններին, ամփոփում և հաստատում	ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով հաստատված Կատարողականի աուդիտի իրականացման կարգը
2. Ներքին աուդիտի օրենսդրությունում կատարողականի աուդիտի դերի մեծացում	ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանում փոփոխության/լրացման կատարում	ՆԱ օրենսդրությունում ամրագրված պահանջ՝ համաձայն որի կատարողականի աուդիտը կկազմի ներքին աուդիտի տարեկան ծրագրի 30%-ը
3. ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում գործող ներքին աուդիտորների կատարողականի աուդիտի իրականացման հմտությունների զարգացում	Կատարողականի աուդիտի վերաբերյալ դասընթացների կազմակերպում	Աուդիտի մասով վերապատրաստված ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում գործող ներքին աուդիտորներ

Թիրախ 41. Ներքին աուդիտորների մասնագիտական գիտելիքների և կարողությունների զարգացում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
---------------	--	-------------------------------------

1. Ներքին աուդիտորների մասնագիտական գիտելիքների և կարողությունների զարգացման ծրագրի մշակում	• Ներքին աուդիտորների կարողությունների գնահատում • Ներքին աուդիտորների մասնագիտական կարիքների բացահայտում • Ներքին աուդիտորների մասնագիտական գիտելիքների և կարողությունների զարգացման ծրագրի մշակում և հաստատում	Ներքին աուդիտորների մասնագիտական գիտելիքների և կարողությունների զարգացման հաստատված ծրագիր
2. Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների օպտիմալացում	• Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակերպման մոտեցումների և ծրագրի գնահատում • անհրաժեշտության դեպքում վերանայում՝ ըստ բացահայտված կարիքների	Ներքին աուդիտորները տիրապետում են ՀՀ ներքին աուդիտի մասին օրենսդրության պահանջներին, ներքին աուդիտի տեսական գիտելիքներին և գործնական հմտություններին
3. Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման առցանց տեղեկատվական համակարգի մշակում	• Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման առցանց տեղեկատվական համակարգի նախագծում • Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման առցանց տեղեկատվական համակարգի գործարկում	Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման առցանց տեղեկատվական համակարգ
4. Հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորման ընթացակարգի վերանայում	• Օրենսդրության վերանայում և փոփոխությունների իրականացում	Հանրային հատվածի ներքին աուդիտի որակի բարելավում

Բաղադրիչ 20. Կենտրոնացված ներդաշնակեցման միավոր (ԿՆՄ)

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 11-ի նիստի N 44 արձանագրության N 15 արձանագրային որոշմամբ հավանություն ստացած Պետական ներքին ֆինանսական հսկողության ռազմավարության համաձայն՝ ԿՆՄ-ն պատասխանատու է միջազգային ստանդարտների հիման վրա ֆինանսական կառավարման, հսկողության և ներքին աուդիտի մեխանիզմների ներդրման աշխատանքները համակարգելու և դրանք մոնիթորինգի ենթարկելու համար: ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 11-ի N 1233-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվել է, որ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով սահմանված լիազոր մարմինը ՖՆ-ն է: Այնուհետև ՖՆ կազմում գործող հանրային ֆինանսների կառավարման քաղաքականության վարչությանը վերապահվել են ԿՆՄ լիազորությունները և պարտականությունները:

Ներկայումս ԿՆՄ-ում առկա մարդկային ռեսուրսները չեն բավարարում ՀՀ հանրային հատվածում իր պատասխանատվության ներքո գտնվող ՖԿՀ համակարգի ներդրումը և Ներքին աուդիտի զարգացումն ապահովելու համար: Հետևաբար, կարիք կա զարգացնելու ԿՆՄ-ի կարողությունները:

Նպատակը

- ԿՆՄ-ի կարողությունների զարգացում

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

49) ԿՆՄ անձնակազմի կարողությունները բավարար են սահմանված գործառույթներն իրականացնելու համար

Թիրախ 42. ԿՆՄ անձնակազմի համալրում և կարողությունների զարգացում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. ԿՆՄ անձնակազմի համալրում և կարողությունների զարգացում	• ԿՆՄ գործառույթների իրականացման համար պահանջվող անձնակազմի և կարողությունների կարիքի գնահատում • ԿՆՄ անձնակազմի համալրում • ԿՆՄ անձնակազմի կարողությունների զարգացման ծրագրի մշակում և իրականացում	ԿՆՄ-ում առկա են անհրաժեշտ կարողություններ

Բաղադրիչ 21. Ֆինանսաբյուջետային վերահսկողություն (ՖԲՎ)

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

Ֆինանսական վերահսկողության ոլորտի վարչարարությունը, ըստ էության, սահմանափակվում է ՀՀ ՖՆ ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության կողմից օրենսդրական դաշտում առկա լիազորությունների իրականացմամբ, այն է՝ ստուգումների պրակտիկայի կիրառմամբ, որտեղ բացակայում են այն իրական մեխանիզմները, որոնք հնարավորություն կընձեռեն ապահովել որոշակի գործողություններ մինչև ստուգումների իրականացումը, ինչպես նաև տրամաբանորեն ապահովել ստուգման արդյունքների իրացումը:

Ֆինանսական վերահսկողության ոլորտում արդիական համակարգի ստեղծման նպատակներն են բարձրացնել ֆինանսական վերահսկողության արդյունավետությունը և պետական ֆինանսների կառավարման ոլորտում ֆինանսական կարգապահության մակարդակը:

Ոլորտի կարգավորման առաջնային խնդիրներն են՝

- բացակայում է ֆինանսական վերահսկողության ոլորտի զարգացման, արդիականացման որևէ փաստաթուղթ կամ ծրագիր՝ ֆինանսական վերահսկողության ռազմավարություն, ուրվագծված չեն զարգացման ուղղությունները,

- գործող համակարգը ամբողջովին չի բավարարում ժամանակակից վերահսկողության պահանջներին, գոյություն չունի ռիսկերի կառավարման արդիական համակարգ.

- արդիական վերլուծական գործիքների և ամբողջական տեղեկատվական բազայի բացակայություն. վարչությունում բացակայում է անհրաժեշտ տեղեկատվությունը և դրա վերծանման համար համապատասխան ծրագրային ապահովումը,
- վերահսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքով առաջացած ֆինանսական պատասխանատվության կիրառման և ստուգումների արդյունքների իրացման համակարգը լիովին չի ապահովում ֆինանսական կարգապահության մակարդակի բարձրացումը,
- վերլուծական մեխանիզմների և տեղեկատվական շտեմարանների բացակայությամբ է պայմանավորված նաև Վարչության գործող կառուցվածքը և ստորաբաժանումների միջև գործառնության պարտականությունների ոչ հստակ տարանջատումը: Միաժամանակ ներդրված չեն կարողությունների զարգացման և կատարելագործման մեխանիզմները:

Նպատակը

- *Ֆինանսաբյուջետային վերահսկողության գործառնության արդյունավետության բարձրացում*

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

- 50) ֆինանսաբյուջետային վերահսկողության ոլորտի մասնագետների վերլուծական կարողությունների ուժեղացում՝ արդիական գործիքների կիրառմամբ,
- 51) ռիսկերի կառավարման համակարգի տեխնիկապես նոր լուծումների կիրառում և տեղեկատվական ամբողջական համակարգի ձևավորում՝ վերլուծական կարողությունների ուժեղացմամբ,
- 52) ստուգման գործընթացի արդյունավետության բարձրացում՝ համապատասխան ընթացակարգերի սահմանմամբ,
- 53) վերահսկողության արդյունքների իրացման արդյունավետ մեխանիզմների ներդրում:

Թիրախ 43. Ֆինանսաբյուջետային վերահսկողության արդյունավետ գործունեության ապահովում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Ֆինանսաբյուջետային վերահսկողության օրենսդրության վերանայում, թարմացում, ֆինանսաբյուջետային վերահսկողության իրականացման նոր մեթոդաբանության մշակում	• ՖԲՎ օրենսդրության ուսումնասիրում, գնահատում և բացերի վերլուծություն • ՖԲՎ՝ ռիսկերի վրա հիմնված ստուգումների նոր մեթոդաբանության մշակում և հաստատում՝ միաժամանակ շեշտադրելով ՖԲՎ գործունեության կատարողականի, ինչպես նաև ստուգում, վերահսկողություն կամ աուդիտ իրականացնող այլ մարմինների հետ համագործակցության հարցերը	Ֆինանսաբյուջետային վերահսկողության իրականացման ժամանակակից մեթոդաբանությունը սահմանող ենթաօրենսդրական ակտեր

2. Ֆինանսաբյուջետային վերահսկողության ոլորտի մասնագետների կարողությունների զարգացում	• ՖԲՎ ոլորտի մասնագետների կարողությունների գնահատում և զարգացման ծրագրի մշակում • ՖԲՎ ոլորտի մասնագետների վերապատրաստում՝ ըստ կարողությունների զարգացման ծրագրի ուղղությունների	Ֆինանսաբյուջետային վերահսկողության ոլորտի մասնագետները տիրապետում են մասնագիտական հմտություններին և ունեն համապատասխան գիտելիքներ
3. Ռիսկերի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվական բազաների առկայություն	• Հասանելիություն պետական մարմիններում առկա տեղեկատվական բազաներին	• Ռիսկերի նոր համակարգի ներդրում՝ հիմնված ամբողջական, փաստարկված և հիմնավորված տեղեկատվության վերլուծության վրա

16. ՀԱՆՐԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բաղադրիչ 22. Հանրային ակտիվների կառավարում

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

Հանրային ոչ ֆինանսական ակտիվների արժեքները և տնտեսական ներուժը ճանաչելը կարևոր է կառավարության ֆինանսական դիրքի գնահատման, ապագա կապիտալ ներդրումների պահանջի որոշման, ռեսուրսների արդյունավետ օգտագործման և ՀՖԿ այլ գորառույթների տեսանկյունից: Հանրային ակտիվների և դրանց օգտագործման հաշվառումը հաշվեգրման հիմունքներով հանրային ակտիվների կառավարման հիմնական հատկանիշներից է: Կարևոր է, որ ակտիվների համար լինեն կառավարման, մոնիթորինգի և հաշվետվությունների կազմման և ներկայացման համակարգեր, այդ թվում՝ ռիսկի կառավարման մեխանիզմներ և կառավարման ու թափանցիկության ապահովման համապատասխան միջոցառումներ:

Ներկայումս ՀՀ-ում գոյություն չունի հանրային ակտիվների հաշվառման և կառավարման միասնական համակարգ և մեթոդաբանություն: Հանրային ակտիվների կառավարման համակարգի ներդրման միջոցառումներ նախատեսված էին դեռևս ՀՀ կառավարության ՊՖԿ բարեփոխումների երկրորդ ռազմավարությամբ և համապատասխան գործողությունների ծրագրով, սակայն 2016-2018թթ. ընթացքում դրանք չեն իրականացվել տեխնիկական աջակցության բացակայությամբ պայմանավորված:

Նպատակը

- պետական ծախսերի ֆինանսական հաշվետվողականության ապահովման նպատակով հանրային ակտիվների և դրանց օգտագործման հաշվառում

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

- 54) հանրային ակտիվների և դրանց օգտագործման հաշվառման օրենսդրական հիմքերի ստեղծում
- 55) հանրային ակտիվների արդյունավետ կառավարում

Թիրախ 44. Կառավարության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների մշտադիտարկման իրականացման ապահովում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Հանրային ակտիվների կառավարման մեթոդաբանության և դրա ներդրման համար անհրաժեշտ իրավական ակտերի մշակում և հաստատում	- Կառավարության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների կառավարման միջազգային փորձի ուսումնասիրություն - Միջազգային փորձի հիման վրա մեթոդաբանության ներդրման համար անհրաժեշտ օրենսդրական ակտերի մշակում և ընդունում	Կառավարության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների կառավարման վերաբերյալ առկա մեթոդաբանություն, և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված իրավական ակտեր
2. Հաստատված օրենսդրության համապատասխան՝ ակտիվների կառավարման տեխնիկաների գծով վերապատրաստումների իրականացում	Պետական մարմինների համապատասխան մասնագետների համար վերապատրաստումների կազմակերպում	Հանրային ակտիվների օրենսդրությանը համապատասխան վերապատրաստված մասնագետներ
3. Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների գրանցամատյանների պատրաստում և մշտադիտարկում	- Պետական մարմիններում Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների գրանցամատյանների փորձարկում - Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների մշտադիտարկման իրականացում - Մշտադիտարկման ընթացքում խնդիրների բացահայտում, դրանց լուծմանն ուղղությամբ առաջարկների ներկայացում	Ակտիվների մշտադիտարկման վերաբերյալ պարբերաբար հաշվետվությունների ներկայացում

Թիրախ 45. Ոչ ֆինանսական ակտիվների վաճառքի, փոխանցման և օտարման գործընթացի և դրանց օգտագործման իրավունքի թափանցիկության ապահովում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Ոչ ֆինանսական ակտիվների վաճառքի, փոխանցման և օտարման	Կվերանայվեն ոչ ֆինանսական ակտիվների վաճառքի, փոխանցման և օտարման ընթացակարգերը և	Ոչ ֆինանսական ակտիվների վաճառքի, փոխանցման և օտարման գործընթացի և դրանց

գործընթացի և դրանց օգտագործման իրավունքի ընթացակարգերի սահմանում	դրանց օգտագործման իրավունքների սահմանման նպատակով կմշակվեն և կհաստատվեն համապատասխան ընթացակարգեր Ակտիվների օտարման տեխնիկաների գծով աշխատակազմի վերապատրաստումների կազմակերպում	օգտագործման իրավունքի ընթացակարգերը հաստատված են - Ակտիվների օտարումը իրականացվում է սահմանված ընթացակարգերին համապատասխան - Ակտիվների օտարման վերաբերյալ հաշվետվություններ
--	--	--

Բաղադրիչ 23. Հանրային ներդրումների կառավարում (ՀՆԿ)

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

Հանրային ներդրումների կառավարման (ՀՆԿ) համակարգի ներդրումը հանդիսանում է կապիտալ ծրագրերի գնահատման, առաջնահերթությունների որոշման և ֆինանսավորման համար անհրաժեշտ ռեսուրսների հաշվարկման առանցքային գործիքակազմի բաղադրիչներից մեկը: ՀՆԿ համակարգը շաղկապված գործողությունների և գործառնությունների հստակ տարանջատմամբ ընթացակարգերի ամբողջություն է, որը հնարավորություն է տալիս որոշումների կայացման գործընթացում պատասխանել հետևյալ հարցերին՝ արդյոք ՀՆԿ ծրագրերը համահունչ են ազգային զարգացման առաջնահերթություններին և արդյունավետ են, արդյոք այդ ծրագրերի իրականացման նպատակով տրամադրվել են ֆինանսական միջոցներ: ՊԾՖՀ-2016 շրջանակի «Բյուջեի դասակարգում» (ԿՑ-4) կատարողական ցուցանիշի համաձայն՝ Կառավարության տարեկան բյուջեի յուրաքանչյուր մասը, ներառյալ ընթացիկ և կապիտալ ծախսերի դասակարգումը, պետք է համապատասխանի ԿՑ-4 պահանջներին, անկախ այն հանգամանքից, թե բյուջետային և հաշվապահական գործընթացներն ինտեգրված են, թե ոչ: «Հանրային ներդրումների կառավարումը» (ԿՑ-11) կատարողական ցուցանիշի 11.3 չափը գնահատում է, թե արդյոք բյուջեի փաստաթղթերը ներառում են ներդրումային նախագծերի միջին ժամկետային կանխատեսումները, և կապիտալի և պարբերական ծախսերի բյուջետային գործընթացը լիովին ինտեգրված է: Հուսալի բյուջետային գործընթացի կառավարումը պահանջվում է ներդրումային գործընթացի ամբողջ պրոցեսում կապիտալ և ընթացիկ ծախսերի համապարփակ և կանխատեսելի բյուջեի ծրագրերի նախագծում: Ուստի հանրային կապիտալ ներդրումների ծրագրերի նախագծման ժամանակ պետք է հաշվի առնել նաև հետագա տարիներին անհրաժեշտ ընթացիկ ծախսերի կանխատեսումները: Կայուն բյուջեի և դրամական հոսքերի կառավարումը, ինչպես նաև ծախսերի և օգուտների վերլուծությունը կախված են ներդրումային նախագծերի ամբողջական ֆինանսական վերլուծությունից:

Արժույթի միջազգային հիմնադրամի աջակցությամբ մշակվել և 2018 թվականին ներկայացվել է «Հայաստանի Հանրային ներդրումների կառավարման գնահատում» (PIMA) հաշվետվությունը՝ նպատակ ունենալով ներկայացնել այս համակարգում տիրող ներկա վիճակը, առկա խնդիրները և բացերը, ինչպես նաև ներկայացնել առաջարկություններ ՀՆԿ արդի համակարգ ձևավորելու և ներդնելու ուղղությամբ: Հաշվի առնելով գնահատման հաշվետվության մեջ ներկայացված առաջարկները՝ ՀՀ կառավարությունը հանձն է առել վերափոխելու գործող ՀՆԿ համակարգը՝ նպատակ ունենալով ապահովել պետական ներդրումային միջոցների առավել նպատակային օգտագործում ու պետական ներդրումային ծրագրերի արդյունքների բարելավում: Համաշխարհային Բանկի աջակցությամբ մշակվել է և ներկայումս գտնվում է քննարկման փուլում

ՀՆԿ ձեռնարկի նախագծի նախնական տարբերակը: Ձեռնարկի նպատակն է ապահովել շրջանակ պետական կապիտալ ներդրումային առաջարկվող ծրագրերի հուսալի և կանոնավոր գնահատումներ կատարելու համար, որոնք ունեն պետական ֆինանսական միջոցների օգտագործման ներուժ, ինչպես նաև փաստարկված տեղեկատվություն իրականացվելիք ծրագրերի ընտրության մասին՝ որոշումներ կայացնելու համար:

Հանրային ներդրումների կառավարման բնագավառում կարևորագույն մարտահրավերներից են՝ հանրային ներդրումների ազդեցության և առաջնահերթությունների գնահատման միասնական համակարգի և մեթոդաբանության բացակայությունը, սահմանափակ հանրային ռեսուրսները, ինչպես նաև ծրագրերի գնահատման և մշակման համար պահանջվող կարողությունների ու վիճակագրության ոչ բավարար մակարդակը: Այս խնդիրների լուծման նպատակով ներկայումս միջազգային փորձագետների աջակցությամբ մշակվում և սահմանվում են հանրային ներդրումների գնահատման մեթոդական ուղեցույցներ և գնահատման համակարգ՝ նպատակ ունենալով նաև շարունակական բարելավել հանրային ներդրումներին վերաբերող վիճակագրությունը և զարգացնել ինստիտուցիոնալ կարողությունները:

2008 և 2013 թվականներին իրականացված ՊԾՖՀ գնահատմամբ «Ներդրումային բյուջեների և առաջադրանքների միջև կապերը» կատարողական ցուցանիշը գնահատվել է «C»՝ հաշվի առնելով ներդրումային որոշումների կայացման թույլ կապերը ռազմավարությունների հետ, իսկ կապիտալ ներդրումների ծրագրերի իրականացման արդյունքում հետագա տարիներին անհրաժեշտ ընթացիկ ծախսերի կանխատեսումների կապը ընթացիկ ծախսերի հետ թույլ են և դրանց հետագա ընթացիկ ծախսերը ընդգրկվել են բյուջեի կանխատեսումների մեջ միայն որոշ (խոշոր) ծրագրերի դեպքերում:

«Հանրային ներդրումների կառավարման» բաղադրիչով նախատեսված միջոցառումները ընդգրկված են եղել ՊԾԿՀ բարեփոխումների ոլորտում իրականացվելիք գործողությունների ծրագրում, սակայն 2016-2018թթ. ընթացքում չեն իրականացվել տեխնիկական աջակցության բացակայությամբ պայմանավորված:

Միաժամանակ ՍԻԳՄԱ-ի Ձեկույցում նշվում է, որ կապիտալ ներդրումների ծրագրերի բյուջեն թույլ է: Եվ թեև «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի դրույթները սահմանում են կապիտալ ծախսերի ֆինանսավորման հիմնական պահանջները, ըստ էության գոյություն չունեն կապիտալ ներդրումների նախագծերի բյուջետավորման և կառավարման համար սահմանված կանոններ և ընթացակարգեր: Միջազգային զարգացման գործընկեր կազմակերպությունները հիմնականում ֆինանսավորում են համաձայնագրերով նախատեսված ներդրումային ծրագրերը: Ներդրումային ծրագրերի ֆինանսավորման համար իրականացնում է նախնական քննարկումներ դոնորների հետ: Այդ ծրագրերի իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է ճյուղային նախարարությունում գործող համապատասխան Ծրագրերի իրականացման գրասենյակներում, որոնց գործառույթները պետական կառավարման համակարգի օպտիմալացման շրջանակներում աստիճանաբար փոխանցվում են համապատասխան պետական մարմինների աշխատակազմերին¹⁴: Ընդհանուր առմամբ, կապիտալ բյուջետավորման գործընթացը ներկայացնում է «ներքևից վերև» մոտեցում, և առկա է ռիսկ, որ ներդրումային ծրագրերի ընտրության գործընթացում ֆինանսավորման թիրախավորված հասանելիությունը կգերակայի Կառավարության ներդրումային առաջնահերթությունների նկատմամբ:

¹⁴ ՀՀ վարչապետի 07.02.2019թ. թիվ 02/16.8/5096-2019 հանձնարարական՝ միջանկյալ ամփոփագիր ՀՀ պետական ֆինանսների կառավարման համակարգի վրա անմիջականորեն ազդող պետական կառավարման համակարգում առկա հիմնական խնդիրների առնչությամբ ձևավորված ընդհանուր առանցքային մոտեցումների վերաբերյալ

Նպատակները

- հանրային ներդրումային ծրագրերի (այդ թվում նաև Պետություն-մասնավոր համագործակցության շրջանակներում նախատեսվող ծրագրերը) ընտրության օրենսդրական հիմքերի սահմանում
- ծրագրի ընտրության ստանդարտ չափանիշների հիման վրա խոշոր ներդրումային ծրագրերի առաջնահերթությունների սահմանում
- հիմնական ներդրումների ընդհանուր կապիտալ և ընթացիկ ծախսերի կանխատեսումների արտացոլում բյուջեում/ՄԺԾԾ-ում
- խոշոր ներդրումային ծրագրերի իրականացման առաջընթացի թափանցիկության ապահովում.

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

- 56) խոշոր ներդրումային ծրագրերի ներգրավումը առաջնահերթություն է, որը իրականացվում է ծրագրի ընտրության ստանդարտ չափանիշների հիման վրա,
- 57) բյուջեն արտացոլում է հիմնական ներդրումների ընդհանուր կապիտալ ծախսերի կանխատեսումը, ինչպես նաև հետագա երեք տարիների ընթացքում կապիտալ և ընթացիկ/պարբերական ծախսերի հաշվարկները,
- 58) առկա են ծրագրի իրականացման ստանդարտ կանոններ և ընթացակարգեր, տարեկան կտրվածքով հրապարակվում է խոշոր ներդրումային ծրագրերի իրականացումը, և խոշոր ներդրումային նախագծերի իրականացման առաջընթացի ընդհանուր ծավալը վերահսկվում է Կառավարության կողմից,

Թիրախ 46. Օրենսդրական հիմքերի ստեղծում՝ հանրային ներդրումների կառավարման մեթոդաբանությունը

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Հանրային ներդրումների կառավարման (այսուհետ՝ ՀՆԿ) ձեռնարկի մշակում	• Ձեռնարկի մշակում, որը ներառում է¹⁵ ✓ Ներդրումային ծրագրերի տնտեսական վերլուծություն ✓ Ծրագրերի ընտրության ստանդարտ չափորոշիչների (առաջնահերթությունների) սահմանում ✓ Ներդրումային ծրագրերի ընդհանուր կապիտալ ծախսերի կանխատեսումները	Հանրային ներդրումների կառավարման ձեռնարկը մշակված և պատրաստ է փորձարկման

¹⁵ Ձեռնարկը մշակելիս հաշվի կառնվի ԱՄՀ կողմից Հայաստանի հանրային ներդրումների կառավարման համակարգի գնահատման հաշվետվությամբ ներկայացված առաջարկները:

	✓ Առնվազն երեք տարիների կտրվածքով ներդրումային ծրագրերի ընթացիկ ծախսերի գնահատումները ✓ Ծրագրի իրականացման և մշտադիտարկման կանոնները ու ընթացակարգերը ✓ Ծրագրի իրականացման արդյունքների գնահատում (ex-post evaluation) • Նախագծի շահագրգիռ ՊՄ-ներին կարծիքի ներկայացում • Նախագծերի վերջնական տարբերակի հաստատում	
2. Հանրային ներդրումների կառավարման ձեռնարկի փորձարկում և թերությունների արձանագրում	• Ձեռնարկի փորձարկման համար նախարարությունների ընտրություն • Ձեռնարկի փորձարկում • Թերությունների արձանագրում	Փորձարկման արդյունքների և առկա թերությունների վերաբերյալ հաշվետվություն
3. Հանրային ներդրումների կառավարման ձեռնարկի վերանայում և հաստատում	• Փորձարկման արդյունքների հիման վրա ձեռնարկի վերանայում • Ձեռնարկի հաստատում	Հանրային ներդրումների կառավարման ձեռնարկը հաստատված է ՀՀ կառավարության կողմից

Թիրախ 47. Հանրային ներդրումների ոլորտի մասնագետների կարողությունների զարգացում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Հանրային ներդրումների կառավարման ձեռնարկի ուսուցման համար հանրային ներդրումների ոլորտի մասնագետների կարողությունների զարգացման ծրագրի մշակում	• Կարողությունների գնահատում, Հանրային ներդրումների ոլորտի մասնագետների անհրաժեշտ գիտելիքների գույքագրում • Հանրային ներդրումների ոլորտի մասնագետների կարողությունների զարգացման ծրագրի մշակում	Մշակված կարողությունների զարգացման ծրագիր
2. Կարողությունների զարգացում	• Ծրագրով սահմանված ժամանակացույցին համապատասխան պետական մարինների մասնագետների կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում	Հանրային ներդրումների ոլորտի մասնագետների կարողությունները բավարար են

Թիրախ 48. 2022 թ. տարեկան բյուջեում ներառված պետական ներդրումային ծրագրերը պատրաստված են սահմանված ՀՆԿ ձեռնարկի պահանջներին համապատասխան

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. ՀՆԿ ձեռնարկի գործնականում կիրառում բյուջետային գործընթացում	ՊՄ-ների կողմից ՖՆ ներկայացված հայտերում ներդրումային ծրագրերը ներառված են ՀՆԿ ձեռնարկի պահանջներին համապատասխան	2022 թ. հաստատված բյուջեում ներառված հանրային ներդրումների ծրագրերը մշակված են ՀՆԿ ձեռնարկի պահանջներին համապատասխան

Թիրախ 49. Հանրային ներդրումների ծրագրերի մշտադիտարկում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Հանրային ներդրումների ծրագրերի մշտադիտարկման իրականացում	- Կիրականացվի Հանրային ներդրումների ծրագրերի ֆինանսական և ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշների վերլուծություն և գնահատում - Կպատրաստվի և կիրառարակվի մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն	Հանրային ներդրումների ծրագրերի մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ հրապարակված հաշվետվություն

17. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐԱՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բաղադրիչ 24. Տեղական ինքնակառավարման մարմիններում ֆինանսական կառավարման արդյունավետությունը

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

Սույն բաղադրիչով նախատեսվող միջոցառումները ներառվել են սույն ռազմավարությունում՝ հաշվի առնելով Հայ-Գերմանական համագործակցության Հարավային Կովկասի երկրներում «Լավ կառավարում հարավային կովկասում» մոդելի շրջանակներում «Ժողովրդավարություն, քաղաքացիական հասարակություն և հանրային կառավարում» գերակա ոլորտով նախատեսված համայնքներում ֆինանսական կառավարման բնագավառում ներառված միջոցառումները:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական և **համայնքների** բյուջեները հիմնվում են ֆինանսական, դրամավարկային և հարկային միասնական պետական քաղաքականության վրա: Բյուջեները կազմվում և կատարվում են՝ ըստ բյուջեների մուտքերի և ելքերի միասնական դասակարգման (Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մաս): Հանրային միջոցների ֆինանսական կառավարման բարեփոխումները կենտրոնացել են կառավարության և պետական մարմինների ֆինանսական կառավարման համակարգի բարելավելու ուղղությամբ: Տեղական մարմինների բյուջեների կազմման, կատարման և եռամսյակային ու տարեկան հաշվետվությունների գործընթացները հետագա կանոնակարգման կարիք ունեն:

Նպատակը

- տեղական ինքնակառավարման մարմիններում հանրային ֆինանսների կառավարման կարողությունների բարելավում և արդյունավետության բարձրացում

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

59) տեղական ինքնակառավարման մարմինների բյուջետային գործընթացի թափանցիկության բարելավում և այդ գործընթացներին քաղաքացիների մասնակցություն խթանում,

Թիրախ 50. Տեղական ինքնակառավարման մարմինների վարչական անձնակազմի կարողությունների և մասնագիտական հմտությունների զարգացում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշ/ներ
1. Տեղական ինքնակառավարման մարմիններում (ՏԻՄ) հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումների ծրագրի իրականացում	• Հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումների ծրագրի և գործողությունների պլանի մշակում • Մի քանի ՏԻՄ-երում Հանրային ֆինանսների կառավարման կարողությունների փորձնական գնահատում • Նպատակային և արդյունավետ ներդրումների կատարման հետ կապված խոչընդոտների հայտնաբերման նպատակով Երևանի քաղաքապետարանում հանրային ներդրումների	• Ուսումնասիրության հաշվետվություններ • ՏԻՄ մակարդակում թափանցիկ և մասնակցային բյուջետային գործընթացի պլաններ

	կառավարման կարողությունների գնահատում • Հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումների առաջնահերթությունների որոշում • Կարողությունների զարգացում • Բյուջետային գործընթացի թափանցիկության և մասնակցայնության բարելավմանն ուղղված մեթոդաբանության մշակում	
2. Տեղական ինքնակառավարման մարմիններում հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումների ծրագրի մոնիտորինգ և ամբողջական իրականացում	• Հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումների փորձնական/պիլոտային իրականացում (ԾԲ, ՀՆԿ, եկամուտների կառավարում և այլն) ընտրված ՏԻՄ-երում, մեթոդաբանության փորձարկում • Պիլոտավորվող ՏԻՄ-երի անձնակազմի վերապատրաստում և կարողությունների բարձրացում • Կուտակված փորձի հիման վրա մեթոդաբանության բարելավում և ամբողջական ներդրում ՏԻՄ մակարդակում • Հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումների ներդրում բոլոր ՏԻՄ-երի կազմակերպություններում • Հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումների իրականացման մշտադիտարկում	• Հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումները ներդնելու ունակ ՏԻՄ աշխատակիցներ • ՏԻՄ մակարդակում թափանցիկ և մասնակցային բյուջետային գործընթաց

18. ԱՐՏԱՔԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԴԴԻՏ

Սույն ռազմավարության այս հատվածի միջոցառումներն իրականացնող երկու մարմիններն են ԱԺ-ն և ՀԴ-ն: Այս մարմինները անկախ պետական մարմիններ են, ինչը ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով և միջազգային ստանդարտներով: Նրանք անկախ են գործադիր իշխանությունից և պետական մյուս մարմիններից:

Ազգային ժողովը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է, որը իրականացնում է օրենսդիր իշխանություն: Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն և իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված այլ գործառնություններ: Ազգային ժողովը նաև վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից

ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ: Ազգային ժողովը, Հաշվեքննիչ պալատի եզրակացության առկայությամբ, քննարկում և որոշում է ընդունում պետական բյուջեի կատարման մասին Կառավարության կողմից ներկայացվող տարեկան հաշվետվության վերաբերյալ:¹⁶

Հաշվեքննիչ պալատը արտաքին պետական հաշվեքննություն իրականացնող անկախ պետական մարմինն է, որը հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննություն է իրականացնում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ¹⁷: Հաշվեքննիչ պալատն Ազգային ժողով է ներկայացնում տարեկան հաղորդում իր գործունեության վերաբերյալ, պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում՝ ընթացիկ եզրակացություններ¹⁸: Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմում է հաշվետու տարվա պետական բյուջեի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության միջոցով՝ օգտագործելով նույն տարվա պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման նկատմամբ ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունները, և Ազգային ժողով է ներկայացնում կառավարության կողմից պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունն Ազգային ժողով ներկայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:¹⁹

ՀՀ կառավարության գործունեության արտաքին վերահսկողության ոլորտում **ՀՀ Ազգային ժողովի** դերի բարձրացման նպատակով ԳՄՀԸ-ն աջակցություն է տրամադրել բյուջեի խորհրդարանական վերահսկողության հզորացման գործընթացի և Բյուջետային գրասենյակի հիմնադրման համար: 2015 թվականի մարտին «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում կատարվել են համապատասխան փոփոխություններ, որտեղ սահմանվել են դրույթներ կապված Բյուջետային գրասենյակի ստեղծման և գործունեության հետ: Հաստատվել են նաև Բյուջետային գրասենյակի (փորձագետների աշխատանքային խմբի) կանոնակարգը և Բյուջետային գրասենյակի փորձագետներին ներկայացվող պահանջների, նրանց ընտրության (նշանակման) կարգը ու վարձատրության չափը²⁰: **Բյուջետային գրասենյակը** մասնագիտական տեղեկատվություն և աջակցություն է տրամադրում Ազգային ժողովի պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին և խմբակցություններին, որը նպատակ ունի բարձրացնելու Ազգային ժողովի կողմից պետական բյուջեի նախագծի քննարկման ու հաստատման գործընթացի արդյունավետությունը, օպերատիվ կերպով արձագանքելու բյուջեի կատարման ընթացքում առաջ եկած խնդիրներին և էական շեղումներին, ինչպես նաև նպաստի հանրային ֆինանսների ոլորտում Ազգային ժողովի կարողությունների զարգացմանը: Միջազգային փորձագետների կողմից Ազգային ժողովի բյուջետային գրասենյակը գնահատվել է որպես կայացած կառույց, որը պետք է որպես ինստիտուցիոնալ կառույց ընդլայնի իր գործառույթները և լիազորությունները, ինչպես նաև քայլեր ձեռնարկի ներքին կարողությունների զարգացման ուղղությամբ:

Բաղադրիչ 25. Ազգային ժողովի կողմից ֆինանսավարկային և բյուջետային ոլորտի վերահսկողություն

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

¹⁶ ՀՀ Սահմանադրության 88-րդ և 11-րդ հոդվածներ

¹⁷ ՀՀ Սահմանադրության 198-րդ հոդված

¹⁸ Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդված, 4-րդ մաս

¹⁹ Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 27-րդ հոդված

²⁰ Տե՛ս «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հավելվածները

Հանրային միջոցների օգտագործման ուղղությամբ թափանցիկության ապահովման, արտաքին աուդիտի բարձրորակ ծառայությունների մատուցման մակարդակի բարձրացման նպատակով ԱԺ կողմից պետք է իրականացվի տարեկան բյուջեի մասին օրենքի նախագծի ուսումնասիրություն, բյուջեի կատարման արդյունավետության մշտադիտարկում, նախորդ տարվա պետական բյուջեի կատարման հաշվետվության ուսումնասիրություն և հաստատում:

«ՀՀ Ազգային ժողովի յոթերորդ գումարման մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին» ՀՀ ԱԺ որոշման համաձայն՝ ֆինանսավարկային և բյուջետային հանձնաժողովը (Հանձնաժողով) իրականացնում է բյուջետային օրենսդրություն, պետական բյուջեի, ֆինանսավարկային և բյուջետային ոլորտների մասով խորհրդարանական վերահսկողություն:

Միաժամանակ Բյուջետային գրասենյակի գործունեության հիմնական նպատակն է Սահմանադրության 111-րդ հոդվածի 1-ին մասով Ազգային ժողովին վերապահված վերահսկողական լիազորությունների, ինչպես նաև Կանոնակարգի 20-րդ գլխով, 114-118-րդ հոդվածներով սահմանված դրույթների արդյունավետ իրականացմանը նպաստելը և պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին մասնագիտական աջակցություն ու տեղեկատվություն տրամադրելը: Բյուջետային գրասենյակը օժտված է գործառության անկախությամբ²¹: Բյուջետային գրասենյակի կողմից պատրաստված տեղեկանքները, հարցումը ներկայացնողի համաձայնությամբ, տեղադրվում են ԱԺ-ի www.parliament.am ինտերնետային կայքի «Բյուջետային գրասենյակ»-ի էջում՝ դրանք հասանելի դարձնելով շահառուների առավել լայն շրջանակի: Հաշվի առնելով բյուջետային գործընթացի շրջանակներում իրականացվող բարեփոխումները՝ անհրաժեշտ է իրականացնել Բյուջետային գրասենյակի և ինստիտուցիոնալ կարողությունների, և ներքին կարողությունների զարգացում, այդ թվում՝ աշխատողների ներքին վերլուծական կարողությունների զարգացում: Հանձնաժողովին Բյուջետային գրասենյակը ներկայացնում է պետական բյուջեի նախագծի և պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության և պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքի ամփոփ նկարագիրը: Միաժամանակ արտաքին աուդիտի հաշվետվությունների ուսումնասիրության արդյունավետության բարձրացման նպատակով ԱԺ պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին մասնագիտական աջակցություն և տեղեկատվություն տրամադրելու նպատակով Բյուջետային գրասենյակը ապահովում է տարեկան պետական բյուջեի, ինչպես նաև ՀՊ-ի կողմից ներկայացված ընթացիկ եզրակացությունների վերաբերյալ տեղեկանքներ:

Իր գործունեության ոլորտում առկա խնդիրներին, դրանց լուծումներին և միտումներին առավել մոտիկից ծանոթանալու համար Բյուջետային գրասենյակը այլ երկրների զարգացած խորհրդարանական Բյուջետային Գրասենյակների հետ կապեր հաստատելու, ինչպես նաև խորհրդարանական Բյուջետային Գրասենյակների համաշխարհային և Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպության (ՏՀԶԿ) երկրների գլոբալ ցանցին միանալու կարիք ունի:

Հանձնաժողովի կազմում ստեղծվել է հաշվեքննության և աուդիտի հարցերի ենթահանձնաժողով, որը պետք է դառնա Հաշվեքննիչ պալատի հետ համագործակցության հարթակ: Հանձնաժողովի և ենթահանձնաժողովի անդամները և համապատասխան աշխատակիցները կարողությունների բարելավման կարիք ունեն:

Նպատակները

- *արտաքին վերահսկողության արդյունավետության բարելավում*

²¹ Գրասենյակը գործում է «ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 16. 12. 2016թ. N ԱԺՈ-267-Ն որոշման 24-րդ գլխով սահմանված դրույթներին համապատասխան:

- տարեկան ֆինանսական հաշվետվությունների մասին ՀՊ զեկույցների ուսումնասիրության արդյունավետության բարձրացում
- բյուջետային գրասենյակի գործառնությունների իրականացման արդյունավետության բարձրացում

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

- 60) ՀՊ-ի կողմից ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ որակյալ մասնագիտական եզրակացությունների առկայություն
- 61) հանձնաժողովը ունի իր իրավասության ոլորտի օրենքների նկատմամբ կարգավորումների և փաստացի իրավիճակի գնահատման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը

Թիրախ 51. Արտաքին վերահսկողության ապահովում (Տարեկան բյուջեի և ՀՊ-ի հաշվետվություններ)

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշներ
1. Տարեկան բյուջեի նախագծերի ուսումնասիրություն	• Բյուջեի նախագծի արդյունավետ ուսումնասիրության նպատակով՝ ԱԺ կանոնակարգով սահմանված դեպքերում և ընթացակարգերով, պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին ԱԺ աշխատակազմի կողմից մասնագիտական աջակցության և տեղեկատվության տրամադրում. • ԱԺ կանոնակարգի 20-րդ գլխով, 114-118-րդ հոդվածներով սահմանված ԱԺ-ին վերապահված վերահսկողական լիազորությունների արդյունավետ իրականացման նպատակով Բյուջետային գրասենյակը մասնագիտական տեղեկատվություն և աջակցություն է տրամադրում Ազգային ժողովի պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին և խմբակցություններին • Հանձնաժողովի, ենթահանձնաժողովի անդամների և ԱԺ համապատասխան աշխատակիցների կարողությունները զարգացնելու	• Տարեկան բյուջեի նախագծի ավելի արդյունավետ ուսումնասիրություն • Տարեկան բյուջեի նախագծի վերաբերյալ պարզաբանումների անհրաժեշտության թվի նվազում

	ուղղությամբ միջոցառումների իրականացում • Աժ կողմից ուսումնասիրման արդյունավետության մշտադիտարկում իրականացնելու վերաբերյալ իրավական ակտի մշակում և ընդունում • Հասարակությունը՝ հանձինս ՔՀԿ-ների, կներգրավվեն տվյալ տարվա բյուջեի նախագծի քննարկումների գործընթացում	
2. Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության և վերջինիս վերաբերյալ ՀՊ-ի եզրակացության ուսումնասիրություն և լսումների կազմակերպում աուդիտ իրականացված պետական մարմինների հետ	• Պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին, մասնագիտական աջակցության և տեղեկատվության տրամադրում, . • Բյուջետային գրասենյակի կողմից ՀՊ-ի ընթացիկ եզրակացությունների վերաբերյալ տեղեկանքների տրամադրում. • Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության և վերջինիս վերաբերյալ ՀՊ եզրակացության ավելի արդյունավետ ուսումնասիրություն • Հասարակությունը՝ հանձինս ՔՀԿ-ների, կներգրավվեն պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունների քննարկումների գործընթացում	• Տարեկան ֆինանսական հաշվետվությունների մասին ՀՊ զեկույցների ավելի արդյունավետ ուսումնասիրություն. • Արտաքին վերահսկողության նկատմամբ թափանցիկության ապահովում օրենսդրական լսումներ տարեկան բյուջեի ձևավորման վերաբերյալ, որի ընթացքում կարող են վկայել հասարակական կամ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների անդամները
3. Հանձնաժողովի կողմից հետ-աուդիտորական հսկողության իրականացում	• ՀՊ-ի եզրակացություններով վերհանված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման վերաբերյալ ՊՄ-ից ստացված տեղեկատվության ուսումնասիրություն	• Հանձնաժողովի կողմից արդյունավետ հետ-աուդիտորական հսկողության իրականացում

Թիրախ 52. Բյուջետային գրասենյակի և Աժ պատգամավորների ու հանձնաժողովների փորձագետների կարողությունների զարգացում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշներ
1. Բյուջետային գրասենյակի ինստիտուցիոնալ և ներքին կարողությունների զարգացում	Կիրականացվի բյուջետային գրասենյակի՝	• Բյուջետային գրասենյակն իր նպատակի իրագործման համար ունի իր

	• Ինստիտուցիոնալ զարգացում՝ ընդլայնելով գործառույթներն ու լիազորությունները, • ներքին վերլուծական կարողությունների զարգացում	գործառույթներն իրականացնելու համար անհրաժեշտ գործիքներ
2. Աժ պատգամավորների և հանձնաժողովների փորձագետների կարողությունների զարգացում	Աժ կողմից տարեկան բյուջեի մասին օրենքի նախագծի ուսումնասիրության, բյուջեի կատարման հաշվետվության կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով Աժ պատգամավորների և հանձնաժողովների փորձագետների համար վերապատրաստումների իրականացում	• Աժ պատգամավորները և հանձնաժողովների փորձագետները արդյունավետ կերպով իրականացնում են տարեկան բյուջեի նախագծերի ուսումնասիրություն, ինչպես նաև պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն

Բաղադրիչ 26. Հաշվեքննիչ պալատի անկախությունը և կառավարության տարեկան ֆինանսական հաշվետվությունների արտաքին աուդիտը

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

ԵՄ ՍԻԳՄԱ Ծրագրի «Հայաստանի հանրային կառավարման համակարգի վերաբերյալ փաստերի ստուգման ելակետային գնահատման զեկույցով» արտաքին աուդիտի ոլորտի մասում ներառվել են իրավական դաշտի այն խնդրահարույց դրույթները, որոնց վերանայումը կհամապատասխանեցնի Հաշվեքննիչ պալատի գործունեությունը ISSAI-ի ստանդարտներին:

Մասնավորապես՝ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքում առկա են մի շարք դրույթներ, որոնք չեն համապատասխանում ISSAI-ի ստանդարտներին: Այդ հանգամանքը բացասաբար է ազդում Հաշվեքննիչ պալատի արդյունավետ գործունեության, ինչպես նաև ներկայացվող արդյունքների վրա՝ նկատի ունենալով դրանց համար միջազգային ստանդարտներով նախատեսված չափորոշիչները:

Անհրաժեշտ է իրականացնել համապատասխան օրենսդրական փոփոխություններ, որոնք կհանգեցնեն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի համապատասխանությանը INTOSAI ստանդարտներին, հաշվի առնելով հետևյալը՝

1. ՀՀ և ԵՄ-ի միջև կնքված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը», որի 24-րդ հոդվածի «դ» կետում սահմանված է, որ Հաշվեքննիչ պալատի, որպես ՀՀ աուդիտ իրականացնող բարձրագույն հաստատության դերի հետագա ամրապնդում՝ մասնավորապես դրա ֆինանսական, կազմակերպչական և գործառնական անկախության տեսանկյունից՝ արտաքին աուդիտի INTOSAI միջազգայնորեն ընդունված ստանդարտներին համապատասխան:

2. Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) 66-րդ Գլխավոր ասամբլեան 22.12.2011թ.-ին ընդունել է «Բարձրագույն աուդիտի մարմինների ուժեղացման միջոցով պետական կառավարման արդյունավետության, օգտավետության, հաշվետվողականության և թափանցիկության բարձրացման վեբսերյալ» թիվ A/66/209 որոշումը, որի համաձայն բարձրագույն աուդիտի մարմինը կարող է արդյունավետ գործել միայն այն դեպքում, եթե վերջինս անկախ է բոլոր պետական մարմիններից և պաշտպանված է ցանկացած արտաքին ազդեցությունից: Այս որոշմամբ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան բոլոր անդամ պետություններին պաշտոնապես հորդորում է ամբողջությամբ կիրառել INTOSAI կողմից ընդունված Լիմայի (ISSAI 1) և Մեխիկոյի (ISSAI 10) հռչակագրերում տեղ գտած սկզբունքներն ու դրույթները:

Հիշյալի շրջանակներում ՀՀ հաշվեքննիչ պալատը ԵՄ ՍԻԳՄԱ Ծրագրի հետ համատեղ մշակում է ռազմավարական զարգացման և դրա իրականացման միջոցառումների իրականացման միջոցառումների ծրագիր:

Սույն բաղադրիչով նախատեսված միջոցառումները կվերանայվեն ՀՀ հաշվեքննիչ պալատի ռազմավարության հաստատումից հետո և կներկայացվեն ավելի մանրամասն և դետալացված:

Նպատակը

- ՀՊ-ի կողմից իրականացվող ֆինանսական ու կատարողականի մասով աուդիտների թվի ավելացում
- ՀՊ-ի որակի կառավարման համակարգի ներդրում
- արտաքին աուդիտի թափանցիկության ապահովում

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

62) հաշվեքննիչ պալատի գործունեությունը ISSAI-ին համապատասխանեցում

Թիրախ 53. Հաշվեքննիչ պալատի 2020-2023թթ. ռազմավարական թիրախների սահմանում և իրականացում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշներ
1. ՀՀ հաշվեքննիչ պալատի ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի մշակում և հաստատում	• ՀՊ օրենքության բացերի վերլուծության իրականացում. • Ռազմավարության նախագծի մշակում. • ԱԺ-ի և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ համաձայնեցում • Ռազմավարության հաստատում	ISSAI-ին համապատասխան հաստատված Հաշվեքննիչ պալատի 2020-2023թթ. ռազմավարություն և գործողությունների ծրագիր
2. Հաշվեքննիչ պալատի 2020-2023թթ. ռազմավարությամբ	• Ռազմավարությամբ սահմանված գործողությունների ծրագրով նախատեսված	Ռազմավարությամբ նախատեսված թիրախները

հաստատված միջոցառումների իրականացում	միջոցառումների իրականացում՝ ըստ հաստատված ժամանակացույցի	իրականացված են: Մասնավորապես՝ - վերանայվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքը, - ՀՊ-ն մշակել է ռիսկերի վրա հիմնված աուդիտի ռազմավարություն, որով նախատեսվում է ֆինանսական և կատարողականի աուդիտի թվի աճ. - իրականացվել են համապատասխան միջոցառումներ արտաքին աուդիտի գործունեության իրականացման թափանցիկությունը և ներգրավածությունը ապահովելու համար (շահառուների, ՋԼՄ-ների, ԲՀԿ-ների ներգրավածությունը)
--------------------------------------	--	--

Թիրախ 54. ՀՊ անձնակազմի կարողությունների զարգացում և մասնագիտական հմտությունների կատարելագործում

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշներ
1. ՀՊ անձնակազմի կարողությունների զարգացման ծրագրի մշակում և հաստատում	- ՀՊ կարողությունների զարգացման ծրագրի մշակում, - շահագրգիռ կողմերի հետ քննարկում, - Ծրագրի հաստատում և իրականացում	ՀՊ աուդիտ իրականացնում է ISSAI-ի ստանդարտներին համապատասխան
2. ՀՊ անձնակազմի կարողությունների զարգացում և մասնագիտական հմտությունների կատարելագործում	- ՀՊ աշխատակազմի կարողությունների զարգացում՝ ռիսկի վրա հիմնված աուդիտ ֆինանսական և համապատասխանության աուդիտ իրականացնելու, ինչպես նաև փորձնական աուդիտների իրականացման համար. - ՀՊ աուդիտորների որակավորում՝ ISSAI ստանդնրերի պահանջներին համապատասխան	- Որակավորված արտաքին աուդիտորներ. - Արտաքին աուդիտի աշխատակազմի պրաֆեսիոնալիզմը

19. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (ԿՖԿՏՀ)

Բաղադրիչ 27. Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) ձևավորում

Առկա իրավիճակի նկարագրությունը և խնդիրները

Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների իրականացման գործընթացում առանձնակի կարևորվում է կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) ամբողջական ներդրման աշխատանքները: ԿՖԿՏՀ-ի ներդրման ընդհանուր նպատակն է պետական հատվածի կազմակերպությունների ամբողջական ֆինանսական տեղեկատվության համախմբման և փոխադարձ ինտեգրման միջոցով՝ պետական հատվածի բարեփոխումների և ֆինանսական համակարգի հաշվառման և հաշվետվողականության գործառույթների, ինչպես նաև հանրային ծառայությունների մատուցման արդյունավետության, որակի և թափանցիկության բարձրացումը:

ԿՖԿՏՀ ստեղծման և ներդրման նախապատրաստական աշխատանքներին աջակցելու նպատակով ՀԲ-ի կողմից Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) կառավարության «Վստահության հիմնադրամի» միջոցների հաշվին տրամադրված TF 012529 դրամաշնորհի շրջանակում կազմակերպված մրցույթի արդյունքներով ընտրված խորհրդատվական կազմակերպության կողմից մշակվել և ՖՆ է ներկայացվել ԿՖԿՏՀ-ի մանրամասն տեխնիկական և գործառույթային բնութագիրը և դրա հիման վրա իրականացված անհրաժեշտ ֆինանսական միջոցների մանրամասն հաշվարկը: Ծրագիրը իրականացվելու է ՀԲ պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրով (PSMP-3) նախատեսված վարկային և ՌԴ կառավարության կողմից հատկացվող դրամաշնորհային միջոցների հաշվին:

ԿՖԿՏՀ-ի մշակման և ներդրման ծրագիրը պլանավորվել է իրականացնել 2 փուլով: Առաջին փուլում նախատեսվում է մշակել և թեստավորել ԿՖԿՏՀ-ի հիմնական բաղադրիչները: Այս փուլում իրականացված աշխատանքները հնարավորություն կտան բարելավել ֆինանսական վարչարարությունը, առավել օպտիմիզացված ծրագրային լուծումների շնորհիվ յուրաքանչյուր մոդուլի համար ունենալ առանձնացված առցանց տվյալների բազաներ: Երկրորդ փուլի ընթացքում պետք է ձեռք բերվեն համակարգչային սարքավորումները՝ ներառյալ հաճախորդների համակարգիչների համար նախատեսված օպերացիոն համակարգերի և օֆիսային փաթեթների լիցենզիաները և իրականացվեն օգտվողների ուսուցումը և համակարգի շարունակական սպասարկումը:

Նպատակը

- պետական հատվածի կազմակերպությունների ամբողջական ֆինանսական տեղեկատվության համախմբում և փոխադարձ ինտեգրում՝ ֆինանսական համակարգի հաշվառման և հաշվետվողականության գործառույթների, ինչպես նաև հանրային ծառայությունների մատուցման արդյունավետության, որակի և թափանցիկության բարձրացում

Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշները

63) ԿՖԿՏՀ-ն ներդրված է՝ կառավարման տարբեր մակարդակներում պետական ֆինանսների կառավարման հետ կապված գործընթացները հնարավորինս ավտոմատացված են

Թիրախ 55. ԿՖԿՏՀ հիմնական բաղադրիչների ներդրում՝ 1-ին փուլ

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրություն	Ակնկալվող արդյունքային ցուցանիշներ
1. ԿՖԿՏՀ մրցութային փաստաթուղթի վերանայում	- ԿՖԿՏՀ աշխատանքային խմբի ձևավորում, որտեղ կընդգրկվեն ներկայացուցիչներ ԿՖԿՏՀ յուրաքանչյուր մոդուլի յուրաքանչյուր գործառույթներին տիրապետող համապատասխան մասնագետներ, ինչպես նաև ներկայացուցիչներ այլ պետական մարմիններից և կազմակերպություններից - ԿՖԿՏՀ-ի հիմնական բաղադրիչների և մրցութային փաստաթղթերի վերնայում, վերջնական տեսքի բերում	ԿՖԿՏՀ-ի մրցույթի իրականացման փաստաթղթերի փաթեթի մշակման մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը վերանայված է և բերվել է ամբողջական տեսքի
2. ԿՖԿՏՀ-ի գնում	- ԿՖԿՏՀ-ի մրցույթի իրականացման փաստաթղթերի ամբողջական փաթեթի կազմում, մրցույթի հայտարարում - ԿՖԿՏՀ-ի մրցույթի իրականացում - ԿՖԿՏՀ-ի մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության հետ պայմանագրի կնքում	ԿՖԿՏՀ-ի մրցույթի իրականացման փաստաթղթերի ամբողջական փաթեթը կազմված է, մրցույթը անցկացված է
3. ԿՖԿՏՀ-ի ներդրման թեստավորում	- ԿՖԿՏՀ ծրագրի իրականացման պլանի մշակում, մանրամասն տեխնիկական առաջադրանքի հստակեցում - ԿՖԿՏՀ ֆունկցոնալ և տեխնիկական մոդուլների նախագծում և մշակում - Համակարգի փորձարկման թեստավորում (տվյալների փորձնական փոխակերպում և միգրացիա)	Տեխնիկական առաջադրանքին համապատասխան ներդրված ԿՖԿՏՀ

Թիրախ 56. ԿՖԿՏՀ հիմնական բաղադրիչների ներդրում՝ 2-րդ փուլ

Միջոցառումներ	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերի նկարագրությունը	Ակնկալվող արդյունքային ցուցանիշներ
1. ԿՖԿՏՀ-ի հիմնական բաղադրիչների ամբողջական ներդրում	- Համակարգչային սարքավորումների ձեռքբերում՝ ներառյալ հաճախորդների համակարգիչների համար նախատեսված օպերացիոն համակարգերի և օֆիսային փաթեթների լիցենզիաները - Համակարգի ներդրում և փորձնական շահագործում՝ գործող համակարգերին զուգահեռ - Տվյալների վերջնական միգրացիա և նախկին համակարգերի շահագործման ավարտ	Տեխնիկական առաջադրանքին համապատասխան ներդրված ԿՖԿՏՀ
2. ԿՖԿՏՀ-ի օգտվողների ուսուցում	- ԿՖԿՏՀ-ից օգտվող ՖՆ, պետական մարմինների մասնագետների համար ուսուցման պլան-ժամանակացույցի կազմում - Ուսուցումների իրականացում	ԿՖԿՏՀ-ի օգտվողները ուսուցանված են
3. ԿՖԿՏՀ-ի սպասարկում	- Հայտնաբերված թերությունների վերացում - Համակարգի ընթացիկ սպասարկում	Պատշաճ ձևով գործող ԿՖԿՏՀ ավտոմատացված համակարգի առկայություն

20. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

14. Սույն ռազմավարության 2019-2023թթ. իրականացվելիք գործողությունների ծրագրի մի շարք միջոցառումների իրականացման համար նախատեսվում է ֆինանսական (այդ թվում նաև տեխնիկական) աջակցություն: Դրանցից մի քանիսի ֆինանսավորման չափը և աղբյուրները որոշված են և ներկայացված են Հավելված 2-ում: Մյուս միջոցառումների իրականացման համար ֆինանսական միջոցների չափը և դրանց աղբյուրները կորոշվեն զարգացման գործընկերների հետ քննարկումների արդյունքում:

21. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ, ՂԵԿԱՎԱՐՄՈՒՄ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

15. Սույն ռազմավարությամբ նախատեսված ՊՖԿԸ ընդհանուր ղեկավարումը կիրականացնի ՀՀ ֆինանսների նախարարը: Պետական մարմիններում ՊՖԿԸ իրականացման համար պատասխանատու են այդ մարմինների ղեկավարները:

16. Տարբեր ոլորտներում իրականացվող աշխատանքների համակարգման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարությունում սահմանվում է ՊՖԿՀԲ քարտուղարություն, որը՝

1) ապահովում է պատասխանատու մարմինների/ստորաբաժանումների կողմից ներկայացված կիսամյակային հաշվետվությունների ստացումը, ամփոփումը և դրա ներկայացումը ՀՀ ֆինանսների նախարարին,

2) ուսումնասիրում է ՊՖԿ ռազմավարությունում և գործողությունների ծրագրում սահմանված թիրախների իրականացումը և դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացնում ՀՀ ֆինանսների նախարարին,

3) ապահովում է սույն ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման շրջանակում պատասխանատու մարմինների/ստորաբաժանումների և զարգացման գործընկերների միջև համագործակցությունը,

4) ըստ անհրաժեշտության ՀՀ ֆինանսների նախարարին ներկայացնում է ռազմավարության և գործողությունների ծրագրի թարմացման վերաբերյալ առաջարկություններ,

5) ըստ անհրաժեշտության զարգացման գործընկերներին տրամադրում է բարեփոխումների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն,

6) ՀՀ ֆինանսների նախարարին ներկայացնում է առաջարկություններ սույն ռազմավարության ներքո գործողությունների իրականացման պատասխանատու մարմինների/ստորաբաժանումների, ներառյալ քարտուղարության կարողությունների զարգացման վերաբերյալ՝ հիմք ընդունելով մոնիտորինգի արդյունքները,

7) ըստ անհրաժեշտության օժանդակում է զարգացման գործընկերների կողմից ռազմավարության և գործողությունների ծրագրի գնահատման աշխատանքներին,

8) ապահովում է տեղեկատվության տարածումը և հասանելիությունը բարեփոխումների իրականացման ընթացքի վերաբերյալ,

9) կազմում և ՀՀ ֆինանսների նախարարին է ներկայացնում ՊՖԿՀԲ-ի վերաբերյալ հաշվետվությունների նախագծերը:

17. Պատասխանատու մարմինների ղեկավարները և ՖՆ պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարները քարտուղարություն են ներկայացնում հաշվետվություններ սույն ռազմավարությամբ նախատեսված՝ իրենց իրավասություններին վերաբերող գործողությունների ծրագրի (միջոցառումների) իրականացման ընթացքի վերաբերյալ: Հաշվետվությունների ձևերը և ներկայացման ժամկետները սահմանում է ՀՀ ֆինանսների նախարարը:

18. ՊՖԿ ոլորտների ռազմավարական թիրախների ապահովման նպատակով ռազմավարության գործողությունների ծրագրով յուրաքանչյուր թիրախի համար սահմանված են պատասխանատու մարմիններ/ստորաբաժանումներ, արդյունքի գնահատման ցուցանիշներ, կատարման ժամկետներ, միջոցառումների իրականացման հետ կապված ռիսկեր և ռիսկերի մեղմացման ուղղությամբ գործողություններ: Ռազմավարությամբ սահմանված են միջոցառումների իրականացման վերջնաժամկետները, և միջոցառումների համար պատասխանատու կառույցները անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն այդ միջոցառումների կատարման ժամկետները հնարավորինս կրճատելու ուղղությամբ:

19. ՊՖԿՀԲ քարտուղարության կողմից իրականացված ՊՖԿ ոլորտների բաղադրիչներով նախատեսված թիրախների և ցուցանիշների նկատմամբ համապատասխանության մշտադիտարկման տարեկան արդյունքների հիման վրա մշտապես կկազմակերպվի առանձին բաղադրիչներով նախանշված նպատակների ու միջոցառումների վերանայումների գործընթաց:

20. ՊՖԿՀԲ գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների ընթացքի վերաբերյալ կիսամյակային տեղեկատվությունը և տարեկան հաշվետվությունը հրապարակվում է ՖՆ պաշտոնական ինտերնետային կայքում (www.minfin.am):

22. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

21. ՖՆ-ն հանրությանը և շահառուներին պարբերաբար իրազեկելու է ռազմավարության ընթացքի, միջանկյալ և վերջնական արդյունքների վերաբերյալ: Հաղորդակցության ձևաչափը հասկանալի կլինի հանրության, գործարարների, ՀՀ նախարարությունների ու այլ պետական մարմինների և այլ շահառու կազմակերպությունների համար, և վերջիններիս համար հնարավորություն կստեղծվի ստանալու արդիական տեղեկատվություն սույն ռազմավարության ներդրման արդյունքում իրականացված՝ ՀՀ տնտեսության, հարկային համակարգի, պետական բյուջեի, հանրային ծառայությունների ֆինանսավորման բարեփոխումների և դրանց կիրառման մեխանիզմների վերաբերյալ:

22. Միևնույն ժամանակ, նախարարությունը կձևավորի հետադարձ կապի մեխանիզմներ, որպեսզի հանրությունից ստանա մատուցվող ծառայությունների բովանդակության և ձևաչափի վերաբերյալ բավարար տեղեկատվություն, ծառայությունները և տեղեկատվությունը կդարձնի նրանց կարիքներին ավելի համապատասխան:

23. ՀՀ ֆինանսների նախարարությունը կբարելավի՝

1) **հաղորդակցության մեխանիզմները**՝ հրապարակելով մամուլի հաղորդագրություններ, հոդվածներ, տեսա և օուդիո նյութեր և այլն,

2) **հաղորդակցության խողովակները**՝ օգտագործելով ՖՆ պաշտոնական ինտերնետային կայքը (www.minfin.am), տպագիր և էլեկտրոնային մամուլը,

3) **հաղորդակցության լեզուն**՝ այն դարձնելով ավելի հասկանալի հանրության լայն շրջանակների համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ